



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԿԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ԲԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

I ՄԱՅԻՍ 1910

ԹԻԻ 10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայրապետական օրհնածիր Անդրանիկ Կոնդակ
Նորոգուեցե՛ք՝

«Ձե՛ աս, այլ յարեա՛ւ» (Բերբուած)

Բրիստոլի Յարուքիւնը.— Տեսնեղո կերպեր եւ ճոշ-
մարիտ տեսողութիւնը

«Որ օրհնես զայնոսիկ» (Յանգաւոր)

Նիքապոլիսի յարուքիւնը

Ս. Հայրապետի Անդրանիկ Կոնդակի զարդանկար-
չութիւնը

Մոռցում եղեր

Մեղա՛ւ

Քիւր՝ այն մը

Աւ

Զատիկ

Շարականի յա՛րու նշանակութիւնը

Պատկերներ Հայ Զայնագրութեան

Ազգային կեանքը

Տաճարներ (Բերբուած)

Աւերիկեան գրականութիւն

ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ

ՕՐ. ՆՈՅԵՄԻ ՔՐԻԿԵԱՆ

ՍՈՒՐԷՆ Վ. ԳԱԼԷՄԵԱՆ

ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՅՈՎԱԵՓԵԱՆ

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ՄԿՐՏԻԶ ԱՃԷՄԵԱՆ

ԳՐ. Շ. ԳԱԼՈՒՍԵԱՆ

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԶ. ՇԻՍԱՐԼԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԱՐԳԻՍ ՊՏԸԼԻԿԵԱՆ

Ս. Շ. ԳԱԼԵՕՆՃԵԱՆ

Գ/ն 50 փարայ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Զատնաճաշար, Յակոբեան խան, Կ. Պոլիս

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՂԻՐԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Տեղապար
Տ. Մատթէոս Վրդպ. Ինճէեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
լոս Վրդպ. Գաֆթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Քնյ. Պողարեան
ԱՐՄԱՇ. — Փոխ-Վանահայր Տ. Մեսրոպ Մ.
Վրդպ. Նարոյեան
ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարդէն Մ.
Վրդպ. Կիւլէսէրեան
ԳՕՆԻԱ. — Տ. Յովհ. Քնյ. Գուլումեան
ԵԳԻՊՏՈՍ. — Առաջնորդ Տ. Մկրտիչ Մ.
Վրդպ. Աղաւնուհի
ԵԴԵՍԻԱ. — Ք. Թուրաքեան էֆ.
ԵՕՁՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Մ. Վ.
Դիմաքեան
ԵՐԶՆԿԱ. — Առաջնորդ Տ. Երուսնդ Վ.
Փէրտանճեան
ԵԻԴՈՂԻԱ. — Առաջն. Տեղապար Տ. Ար-
տաւազդ Վրդպ. Գալէսէրեան
ԶՄԻԻՌԻՆԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Յովհաննէս Ա. Քնյ. Մինասեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Քնյ. Տ. Գա-
լուստեան
ԽԱՐԲԵՐԴ. — Առաջն. Տեղապար Տ. Գէ-
որգ Մ. Վրդպ. Ապանեան
ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Մ. Վ.
Սաատէթեան
ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թոքատեան
ԿԻՐՄԻԻԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Քն. Նշանեան
ՀԱԼԷՊ. — Առաջն. Տեղապար Տ. Շառէ Վ.
Գապարեան
ՄԱՆԶԷՍԹՐ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ս.
Եպիսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Քնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՄԱՐՍԻԼԻԱ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Եղիշէ
Քնյ. Գալիլեան
ՄՈՍԿՈՒԱ. — Տ. Պօպօնեան Քնյ.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Քնյ. Պիպիեան
ՆԻՒԵՕՐԲ. — Տօքթ. Թիւրեքեան Խան
ՆՈՐ ԶՈՒՂԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Բազարատ Վրդ. Վարդաղարեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Քն. Տատ-
եան
ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Քենեան
ՊԱՆՏՐՄԱ. ՊԱԼԼԲԻՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Մ. Վրդ. Մաղրման
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմբիւքեան
ՊԱՅՐԱ. — Կարապետ էֆ. Քէրթմէնեան,
անօրէն աղդ. Վարժարանաց
ՊԱՐՏԻԶԱԿ. — Յովհաննէս էֆ. Տ. Կարա-
պետեան

ՊԵՅՐՈՒԹ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Եղե-
կէլ Վրդպ.
ՊՈՒՔՐԷՇ. — Ղապարոս էֆ. Կոնիէեան
ՊՐՈՒՍՍ. — Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս.
Եպիսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Քնյ. Մըրջ-
նիկեան
ՌՕՏՕՍԹՕ. — Առաջն. Փոխանորդ Տ. Բար-
թող Քնյ. Թաքմեան
ՍԱՄՍՕՆ. — Առաջն. Տ. Սահակ Մ. Վրդ.
Օտապաշեան
ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Քն. Օտապաշեան
ՍԵՂԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Սերովբէ
Քն. Ներշապուհ
ՍՕՖԻԱ. — Տ. Մեսրոպ Քնյ. Տ. Մեսրոպ-
եան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Քնյ. Տրէզ-
եան
ՏԷՏԷ ԱՂԱՃ. — Գարեգին Քնյ. Տէօլ-
էթեան
ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէսեան
ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Դէորդ Քն. Թէրզեան
ՏՓՂԻՍ. — Հ. Առաքելեան
ՎԱՌՆԱ. — Աւետիս էֆ. Զարպանէլեան
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պուհ Քնյ. Քիպարեան
ՔԷՕՍԹԷՆՃԷ. — Տ. Մատթէոս Քնյ. Մա-
նիկեան
ՔՂԻ. — Առաջն. Տեղապար Տ. Պոպկ Վրդ.
ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Քնյ. Դերձակեան
ՖՐԷԶՆՕ. — Ազն. Յակոբ էֆ. Նշկեան
«ՏԱՃԱՐ»-ը կը վաճառուի բոլոր լրա-
գրաւաճառներու կողմէ: Վաճառման կեդ-
րոնատեղին է Պոլիս, Պազըրճըլար՝ Արմե-
նակ Եաղրճեան և Ընկ. «Միւնեսպ» Գրա-
տուն. Իւրա, Սըլանախի ղէմ, ծխալա-
ճառ Գառնիկ էֆ. Կիւլէրեանի և ուրիշ
ծխալաճառներու քով:

ԱԶԱՏՈՐԴԻ, ՍՏՐԿՈՐԴԻ, ՀԱՅՈՐԴԻ,

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հոգեբանական պատկեր մը Հայ ժողովուրդի

իրական կեանքէն

Դրեց

ԳԱՐԵԳԻՆ Վ. ԽԱԶԱՏՈՐԵԱՆ

Կեդրոնատեղի վաճառման

Ս Ի Ե Ե Ա Յ Դ Ր Ա Տ Ո Ւ Ն

Կը գտնուի նաև Պապիկեան, Գլըճեան
և Պալեկոյ գրալաճառներու և Պայպլ Հա-
ռզ Դրիպոբ էֆ. Շահպաղեանի մօտ: Դրն
2 դահեկան:



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

1 ՄԱՅԻՍ 1910

ԹԻԻ 10

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆԱԶԻՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿ

ՄԱՏԹԵՈՍ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕԷՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ԷԶՄԱԾՆԻ

ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԿԻԼԻ-
ԿԻՈՑ ՏԵԱՌՆ ՍԱՀԱԿԱՅ, ԿԱԹՈՒՂԻԿՈ-
ՍՈՒԹԵԱՆ ԱԶԹՍՄԱՐԱՅ, ՊԱՏՐԻԱՐԲՈՒ-
ԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ, ԵՒ ԱՄԵ-
ՆԱՊԱՏԻԻ ՊԱՏՐԻԱՐԲԻ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ
ԵՂԻՇԵԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԳԵՐԱԿԱ-
ՄԻԸ ԱՌԱՋՆՈՐԳԱՅ, ԱՐԵՎԵԼԻՍԿՈՊՈՍԱՅ, Ե-
ՎԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՆԱՆԱՐԳ, ՄԻԱՔԱՆԱԿԱՆ
ՈՒԽԱԹԵՅ, ԲԱՐԵՂՆՈՐԶ ԶԱՆԱՆԱՅԻՅ, ՍԱՐԿԱ-
ԼԱԳԱՅ և ՂԱՐԱՅ, ԿՐԹԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐ-
ԺԱԿԱՆ, ԱՐԶԵԱՄԱԳԻՄԱԿԱՆ և ՈՐԲԱԽՆԱԺ
և այլ ամենայն բարեպաշտական հաստա-
տութեանց, և համօրէն ըստ կարգի և ըստ
սատիճանի հայազն պատուական ժողովրդոց
սփռելոց ընդ երեսս երկրի՝ արանց և կա-
նանց, ձերոց և տղայոց հարազատ որդւոց
Մօրս Լուսոյ Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի
ողջոյն և օրհնութիւնն ի Բրիստոս Յիսուս:

Շնորհ, սէր, խնդութիւն և խաղաղու-

թիւն ամենակալին Աստուծոյ բազմասցի ի
ձեզ՝ լուսածնունդ որդւոց առաքելական
ուղղափառ Եկեղեցւոյ մերոյ Հայաստան-
եայց, որ հիմնեալն է յառաջին Լուսաւոր-
չացն մերոց՝ սրբոց առաքելոցն Թադէոսի
և Բարթողիմէոսի և ի սրբոյ հօրէ մերմէ
Գրիգորէ երկրորդ Լուսաւորչէ Հայաստան-
եայց, որոյ գլուխն է Տէր մեր Յիսուս
Քրիստոս:

Յետ հայրապետական ողջունիս և օրհ-
նութեանս յայտ առնեմք սիրեցեալ եղբարց
մերոց և որդւոց ի Տէր եթէ՝ ազգն Հայոց՝
հոգեւորականք և աշխարհիկք ի ձեռն պատ-
գամաւորաց համազգային ժողովոյ գումա-
րելոյ յառաջնում աւուր ամսեանն Նոյեմ-
բերի անցեալ ամի ի Մայր Տաճարի Սրբոյ
Էջմիածնի, ընտրեաց և կոչեաց զիս ի պաշ-
տօն Մայրազոյն Պատրիարք-Կաթողիկոսի
ամենայն Հայոց: Թէպէտև յարտասեալ

քառամասնայ աղգային-եկեղեցական պաշտամանք, իրաւունք էր իմ այլ ևս դադարել և կալ ի հանգստեան, սակայն իբրև ուխտադիր պաշտօնեայ Եկեղեցւոյ և Ազգի, հարկ ի վերայ կայր յակամայս իսկ յարգել զմիահամուռ կամս ազգի և Եկեղեցւոյ Հայոց. ուստի ի զօրութիւն Տեսնոն ապաստան և յուսարի, զի ամենայն հոգեւորականք, յատկարար և միաբանական Ուխտ Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի աջակից և վաստակակից ինձ եղեցին ի կարի ծանր պաշտամանս յայսմիկ, և յուսարից մանաւանդ զի ի հոգեւորական, ի վարչական, ի կրթական, ի տնտեսական և այլ հոգեւորապատկան դործս եկեղեցւոյ Հայաստանեայց իսկական իրաւունք Հայրապետութեան ամենայն Հայոց, կացցին և մնացին անվթար և ի զօրութեան իւրեանց, ընկալայ զպաշտօն ծայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի ամենայն Հայոց, և ռդորմութեամբն Աստուծոյ ընկալեալ և զհայրապետական օծումն սուրբ յերեքտասներորդի առեւանդ Սեպտեմբերի այսր ամի՝ յաւուր տօնի Վերացման Սրբոյ Խաչին, արկի ձեռն ի գործ:

Ըստ կարգի և ըստ աստիճանի պատուական պաշտօնեայք և ժողովք, խորհուրդք և հոգաբարձութիւնք և այլն Եկեղեցւոյ մերոյ և Ազգի և ժողովուրդ Հայոց, որ ի ափիւռս աշխարհի յրուհալ՝ զիտէք ազատքէն զի ազգն Հայոց համօրէն կամի և ցանկայ միայն պահել զգոյութիւն իւր և Եկեղեցւոյ իւրոյ և զիրաւունս նորա: Գիտէք, զի փափաքի վայելել զբարիս օրինաց և արդարութեան. սակայն հակառակ դանկութեան և ըզձանայս այսմիկ, քանի՞ն ծանր պայմանք չուրջ զմեօք պատեալ նեղին և տուայսին զԱզգ մեր և զԵկեղեցի: Գիտէք և քաջ, զի ազգն Հայոց, ուստեք նորա և դասերք՝ որդիք քաղաքայնոց և գիւղականաց կամին խաղաղ կենօք և անդորր մոօք վաստակիլ յուսմունս և ի զիտութիւնս և զարգանալ ի նոսրն և ի բարոյական դաստիարակութեան. սակայն նիւթական, ֆիզիքական և բարոյական հարստահարութիւնք բեկանին գալիստութիւնս նոյս և զվաստակ, և գոզյես ջանք և նպատակ հարստահարացն

է զրկել խաղաղ զորդիս Հայոց ի մտացն լուսաւորութենէ և ի բարոյիցն ազնուութենէ և ի կրօնիցն սրբութենէ ի մեծ լիտս ժողովրդեան և Հայրենեայ:

Եւ արդ, ըստ պարտուց պաշտաման իմոյ ի նկատ առեալ զայս կոցութիւն տաւապեալ Ազգիս և ի վերայ հասեալ իրացն հանգամանաց և զօրութեանց աշխարհի՝ յորդոբեմ զձեզ զամենեկն սիրով տաւապակիր Ազգիս Հայոց. փութաշիք լուսաւորել զմիտս ձեր և որդւոց ձերոց, իսկամուտ լինել իսկական կացութեան Ազգին և Եկեղեցւոյ Հայաստանեայց: Փութոյ պնդութեամբ ձեռն ի գործ արկէք զամենայն կրթական, բարեգործական, զարհեստական և զայլ հաստատութիւնս, որպէս և զեկեղեցիս և զվանորայս պահել ի յարատե և ի բարգաւաճ վիճակի: Փոյթ անձին ունիջիք զարգանալ ճշմարիտ իմաստութեամբ, զօրանալ բարոյական և քրիստոնէական դաստիարակութեամբ և ամբանալ հաստատուն կամօք, և լինել ընտիր ընտիր որդիք Ազգի Հայոց և Եկեղեցւոյ, և բարի քաղաքացիք երկրին և Հայրենեայ:

Յորդորեմ զհամօրէն զորդիս իմ՝ դյաւէտ սիրեցեալս, զի որպէս մինչև ցոյցօր, նոյնպէս եւ յետ այսորիկ լիառատ արօք իւրեանց յօժարակամ սատարեցին հաստատութեանցն այնոցիկ և կրթութեան որդւոց Ազգին, և որ կարողքն ի ձէնջ՝ լինիցին մեկնաս ամենայն վաստակաւորաց վասն Ազգի և Եկեղեցւոյ:

Հրաւիրեմ զմեծատունս և զոր ընդ ամենայն երեսս երկրի սիւսեալ հայորդիս, փութացէ՛ք, միմիկ արեցէ՛ք և սիրտիցէ՛ք ի ձեռն անօրինաց խողխողելոյն զմնացորդս Հայոց Ատանայի և Բերիոյ, որք ի տագնապս թշուառութեան մատնեալք կան քաղցեալ, մերկ և անտուն: Փութացէ՛ք, ասեմ, առատասրտութեամբ ձերով հասանել յօգնութիւն որբոց, այրեաց և հիւանդաց նոցին, և յանձանձել զպիտոյս նոցա և զգարման: Գիտաջիք, զի որք՝ բարեբարեկն զուարթ սրտիւ՝ զանուն և զյիշատակ իւրեանց թողուն անմահս և անմոռալ նալիս: Յիշեցուցանեմ յաստանօր և զքան Առաքելոյն եթէ՝ «Մեծատննց Հ.՝ պատուէր

տաճկը զբարիս գործել, մեծանալ գործով ք բարութեան առատոս, սիրունս և հաղորդս լինել»։ Ա. Տիմոթ. Զ. 17 և 18։

Յորդորեմ զհամբոյն հոգեւորականս եւ զժողովուրդ Հայոց, սիրով, անկեղծութեամբ եւ հաւատարմութեամբ կատարել զհպատակային պարտականութիւնս ձեր ըստ իրաւանց եւ արդարութեան, և լինել միշտ օրինասէրս և կարգապահս։ Ի բաց թողուլ և զգաղթականութիւն, զթափառելն յօտարութիւն՝ գլուխն և զաւերիչ կենաց ձերոց և ընտանեաց և որդւոց և Ազգին իսկ գլխովին, այլ արթնութեամբ, համարաշխ և խաղաղասէր՝ ոգւով՝ վաստակիլ ի կանոնաւորութիւն և ի բարգաւաճումն հայրենեաց և երկրին, որոց էք որդիք և քաղաքայիք։ Ուստիւք զլեզու և զպատմութիւն և զօրէնս երկրին, զի պիտանիք են ձեզ յոյժ յոյժ իբրեւ հպատակաց, և հարկաւորք ի յաջողութիւն գործոց ձեռաց ձերոց և աշխատութեան. ի հայթայթանս և ի իմամարկութիւն կենաց ձերոց և ընտանեաց և որդւոց։

Յորդորեմ զամուսնացեալս՝ զարս և կանայս կեալ ընդ միմեանս սիրով սրբութեան, համաստութեամբ և զգաստ կենօք։ Միաբան աշխատակցութեամբ բաձնալ զհոգ ամուսնական կենաց և զծանրութիւն խնամոց և կրթութեան որդւոց ձերոց։ Զգոյշ լերուք, մի՛ տայք տեղի ի ձեզ անհաճոյ դիպաց, կենակցութեան ձերոյ քայքայիչ խնդրոց, որք խռովեն զկեանս ձեր և արկանեն զձեզ և զորդիս ձեր ի պէս պէս թշուառութիւնս։

Յորդորեմ զձեզ նաեւ յատուկ խնամով ուսանիլ և ուսուցանել որդւոց ձերոց զքնիկ բարբառ մեր մայրենի, զպատմութիւն Ազգի և Եկեղեցւոյ մերոյ, զքրիստոնէական կրօն ըստ ոգւոյ Աւետարանի սրբոյ և ըստ ուղղափառ վարդապետութեան Եկեղեցւոյ մերոյ Հայաստանեայց։ Յամենայն կեանս ձեր և ի պայմանի զգրոյձ, զիրաւունս Եկեղեցւոյ մերոյ և Ազգի և զհնութիւնս, որ ի նախնեաց մերոց անտի, զմայրալ և անկորոնստ պահեմք։ Որդիական երախտաւ գիտութեամբ և պատկառոտ հնաւատարմութեամբ սիրեցէ՛ք զբազմաշարժնոր Մայրն

ձեր՝ ալեւոր՝ զսուրբ Եկեղեցին Հայաստանեայց։ Սիրեմք զնոյն սէր և ընդ այլ ամենայն ազգային և եկեղեցական հաստատութիւնս զնուիրականն իւրով հնութեամբ, և ի սիրելու աշխարհի ցիր և ցան եղելոյ ժողովրդեանն Հայոց զմիմիակ կեղծոնն միութեան և զկապ՝ զՄայր Աթոռն Արատեան, զԿաթողիկէ Սուրբ Էջմիածին։ Գիտաովիք յաւէս, սիրեցեալք իմ ի Տէր՝ պատուական եղբարք և լծակիցք և որդիք Հայոց, զի ի կենացն մերոց անցելոց այսօրիկ և եթ մնացեալ են մեզ խարխս ամբողջութեան յանվթար պահպանութիւն գոյութեան Եկեղեցւոյ մերոյ և Ազգի, և ի պարծանս մեր և ի մխիթարութիւն։

Ի վերջոյ յիշեցուցանեմ ձեզ՝ առաջնորդացդ և հովուաց, վանահարցդ և միսրանական ուխտից, քահանայիցդ և սարկաւանդաց և ամենայն սպասաւորաց սրբոյ Եկեղեցւոյ զմամուսնոր պարտաւորութիւնս ձեր հոգեւորականս։

Եղբարք իմ և լծակիցք ի Քրիստոս և որդիք ի Տէր, ըստ ուխտին ձերոյ, որ առաջի Աստուծոյ և հաւատացելոց, և ըստ յօժարակամ յանձնառութեան նուիրեցէ՛ք զանձինս ձեր ի սպաս պաշտաման Տեառն և ի գործ շինութեան Եկեղեցւոյ և Ազգի խոճի մասք և անկեղծաւոր հաւատով, և վաստակեալի՛ք շաղկապեալք համարաշխ ոգւով և սիրով եղբայրութեան իբրեւ ճշմարիտ աշակերտս Քրիստոսի։ Լուարո՛ւք զինչ ասէ Տէր Յիսուս և Առաքեալն նորա Պօղոս եթէ՝ «Յայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտ էք, զի սիրեցէ՛ք զմիմեանս»։ Յովհաննէս Աւետ. ԺԳ. 35։ «Մի՛ անպիոյթ մօռներ զչնորհացդ, որ ի քեզ են, որ առեաւ քեզ... ի ձեռնադրութենէ երիցութեան։ Յայդ խորհեաց և ի դոյն կանխենք իր, զի քո յառաջդիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի»։ Ա. Տիմոթէոս Դ. 14 և 15։ «Գլուխ պատուիրանին սէր է, ի սուրբ սրտէ և ի մտաց բարեաց և յանկեղծաւոր հաւատոց»։ Ա. Տիմոթ. Ա. 5։ «Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ... և գիտիցեմ զխորհուրդս ամենայն և զամենայն գիտութիւն... և սէր ոչ ունիցիմ, ոչինչ ծագիմ։ Սէր երկայնամիտ է, քաղց-

րանայ, ոչ յանդգնի, ոչ ինչպէս զիւրն, ոչ գրգռի, ոչ խորհի զչար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն:» Ա. Կորնթ. ԺԳ. 2-6: Մի՛ տայք տեղի գայթակղութեան՝ ոչ փառասիրութեամբ և ոչ պճնասիրութեամբ, ոչ շռայլութեամբ և ոչ ժշատութեամբ, ոչ անարդարութեամբ և ոչ տշառութեամբ, ոչ ազանութեամբ և ոչ արծաթսիրութեամբ, զի «արծաթսիրութիւն պատճառ է ամենայն չարեաց», ասէ գիրն. այլ եղերուք մշակ առանց ամօթոյ, հեզ, խոնարհ, բարեաէր, անաչառ և արդարասէր: Պարկեշտութեամբ կենայ ձերոյ և բարեպաշտութեամբ օրինակ լերուք միմեանց և ժողովրդեանն Աստուծոյ, զի այսպէս ասէ Առաքեալն եթէ՝ «Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ երկցակից և վկայ չարչարանացն Քրիստոսի... Արածեցէ՛ք որ ի ձեզ հօտդ է, մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ. մի՛ իբրեւ ակամայ, այլ կամաւ. մի՛ իբրեւ տիրելով վրձակացն, այլ լինել օրինակ հօտին:» Ա. Պետրոս Ե. 1-3: Վառեալ ի սէր սրբութեան կրօնից՝ փոյթեալանդն սգւով ուսուցէք և քարոզեցէք ժողովրդեանն Աստուծոյ զքրիստոնէական բարեպաշտութիւն և զկատարելութիւնս՝ զհաւատ, զսէր և զյոյս, զգութ, զողորմութիւն, զեղբայրսիրութիւն և զմարդասիրութիւն. ուսուցէ՛ք լինել արթունս, զուարթունս և պարտաճանաչս և պարտակատարս յամենայնի, և զոր ինչ քարոզէքդ և ուսուցանէք հաւատացելոց, զնոյն ցուցչիք և յանձին ձերում ի բովանդակ կեանս ձեր և ի կենցաղովարութեան:

Պարտ է ձեզ՝ քահանայիցդ Աստուծոյ և սարկաւագաց և դպրաց, հաւատով և երկիւղածութեամբ պաշտել զԵկեղեցի սուրբ և զսեղանն Տեառն, ի ժամու և ի տարաժամու հասանել ի վերայ, և անթերի կատարել և լցուցանել զհոգեւորական պիտոյս հաւատացելոց և մխիթարել զնոսա ի վիշտ մարմնաւորս և հոգեկանս, իբրեւ իսկական հայր և հաջիւ: Ի միտ ամէք միշտ զբան գրոյն, եթէ՝ «Որ բարեոք վերակացու լինիցին երկրունք կրկին պատուոյ արժանի ելլիցին, մանաւանդ որ աշխատիցին բանիւ

և վարդապետութեամբ»: (Ա. Տիմոթէոս, Ե. 17:) Տեղուչք եկեղեցեայն Աստուծոյ, եղբարք իմ սիրելիք. զգոյշ լերուք, մի՛ կռչէք զթանձրամիտս և զսպականեալս բարուք ի պաշտօն սրբութեան և ի ծառայութիւն Տեառն և հաւատացելոց. վասն զի այնպիսիքն զԱստուած, զպաշտօնն սուրբ և զհաւատացեալս միանգամայն անարգեն և արհամարհեն: Գայթակղեցուցանեն և զժողովուրդ Տեառն և ուժացուցանեն իսկ զնոսա յԵկեղեցւոյ անտի Աստուծոյ և ի քրիստոնէական բարեպաշտութենէ: Արկանն ընդ ծանր պատասխանատուութեամբ առաջի Աստուծոյ և հոգեւոր իշխանութեան եկեղեցւոյ զայնոսիկ, որք ձեռն դնեն յայնպիսեայն վերայ: Լուարուք զինչ գիրն ասէ. «Զիս» վաղվաղակի յուրուք վերայ մի դնիցիս և մի՛ կցորդ լինիցիս մեզայ օտորաց. զանձն քո սուրբ պահեալիք:» (Ա. Տիմոթէոս, Ե. 22:)

Հուսկ ապա, սիրեցեալքդ իմ ի Տէր՝ սրբանուէր պաշտօնեայք Սրբոյ Եկեղեցւոյ և պատուական ժողովուրդ Հայոց, աղօթեցուք հանապաղ՝ ես վասն ձեր և դուք վասն իմ, և ասացուք ամենեքեան միաբանութեամբ ընդ սաղմոսանուագն Դաւթի. «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա՛ ի մեզ Տէ՛ր, և զգործս ձեռաց մերոց յաշուեա՛ մեզ»: Ամէն:

ՄԱՏԹԵՈՍ Բ. ԿԱՅՈՂԻԿՈՍ
Ամենայն Հայոց

Տուաւ Կոնդակս յամի շնորհաց Փրկչին 1909ի 24 Սեպտեմբերի և ըստ տօմարիս ՌԹԾԹ, ի Հայրապետութեան մերում Ա. տմի, Արարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի. ի Վաղարշապատ. Թիւ 1

ԾԱՆՈԹ. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. — Տաճարի խմբագրութիւնն ուրախ և երջանիկ կը զգայ ինքզինքը՝ իր Զատիկական թիւին գլուխը զարդարելով հայրապետական տոյն անդրանիկ կոնդակով, որ Մաղկազարդի կիրակի օրը կարդացուեցաւ մայրաքաղաքիս եկեղեցիներուն մէջ, և իր իոնարհ ձայնը կը միացնէ Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսին հայրապետական յորդորներուն,

որոնց մտադիր ունենդրութիւնն և կատարումը մեծամեծ բարիքներ պիտի սփռեն ազգին և Եկեղեցիին վրայ: Շահեկան էին այս առթիւ կարեւոր տեղեկութիւններ՝ առն իրենցական հրատարակութեան պարագաներուն վրայ: Ուստի Տաճարի ուրիշ մէկ կողմը կը ներկայացնենք հաճոյքով Ս. Էջմիածնի միաբան Տ. Գարեգին Վ. Յովսէփեանի հրատարակած տեղեկութիւնները, որոնցմէ կը տեսնուի թէ ո՞րքան մեծ խնամք տարուած է մեր նախնեաց զեղարուեստի հոյակապ արտադրութեանց գեղեզեցիկ մէկ նմոյշն երևան րեւելու: Ծնորհաւորելի է այս զաւգափարին յղացումը, և անոր յաջող իրագործումը:

Դժբախտաբար, սակայն, հայ զեղարուեստի ուշագրաւ նմոյշն հանդիսացող այս կոնդակէն խիստ սովորաբար օրինակներ զրկուելու են մայրաքաղաք՝ կարեւոր թաղերու համար, և մնացեալներուն զրկուած է կոնդակին պարզ մէկ տպագրութիւնը՝ Ս. Էջմիածնի տաճարին սովորական պատկերովը և հայրապետական կնիքովը միայն զարդարուած: Այս խտիրը՝ ընդմէջ հարուստ, կարեւոր թաղերու և... միւսներուն, աննպաստ ազդեցութիւն թողած է ժողովրդեան մէջ, որուն արձագանգ եղան թերթերը, շեշտելով հաւատարմեան կրօնքի բարձրագոյն ներկայացուցչութեան կողմէ ցուցուած խտրութեան յառաջ բերած տխուր տպաւորութիւնը: Փափաքելի էր որ գոհացուցիչ բացատրութեամբ մը բուժուէին միւսքերը:

Տաճարի նմազարութիւնը՝ Բրիստոսի Տեառն մերոյ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԵԱՆ առթիւ ցեւր շնորհաւորութիւններ կ'ուղղէ իր բազմաթիւ ընթերցողներուն:

Միւս կողմէ ներում կը խնդրէ 10րդ թիւը յապաղումով մը Մայիս 1ին հրատարակելուն համար: Ասիկա շարիւղի էր միայն նմազար-Տեօրեանի՝ Զատիկեան առաջ՝ իր հեռաւոր քաղերու ժողովուրդներուն հայ հարկադրուած հովուական այցելութեանց եւ տնային օրերու եկեղեց. արարողութեանց, որ ուրիշ զբաղումի ժամանակ չբողոքին իրեն: Աւելորդ է ըսել թէ այս յապաղումը չի վնասեր ընթերցողներուն, քանի որ տարեկան 24 թիւ պիտի տեսնուի միշտ պատ. բաժանորդի:

ՆՈՐՈԳՈՒԵՑԷՔ

«Մի՛ ստէք միմեանց. մերկայարուր զի՛ն մարդն զործովքն իւրովք. եւ զնորն նորոգեալ ի գիտութիւն ըստ պատկերի Արարչին իւրոյ»: Եղեց. Գ. 9—10:

Քրիստոսի Յարութիւնը՝ մարդկային պատմութեան մէջ Մեծ Յեղափոխութեան մը հիմն է: Անոր հաւատարմական իմաստը ինչպե՞ս խորունկ նշանակութիւն ունի Քրիստոնէական Եկեղեցւոյ համար, նոյնպե՞ս և աւելի խորախորհուրդ է այն Մեծ Յեղափոխութիւնը, որ Յարուցեալ Քրիստոսի ազդեցութեամբք անմիջապէս երեւան եկաւ մարդերու և սիրտերու վրայ: Ասիկա ա՛լ տարրական, պատմական, իրական, կենդանի ճշմարտութիւն մըն է, ծանօթ և յայտնի ամէնուն: Այս Մեծ Յեղափոխութիւնը Քոստան Դարու կեանք մը ունի և ամէն օր կը շեշտուի: Նոյն ինքն Քրիստոնէութիւնը, Քրիստոնէութեան կենդանի գոյութիւնն է այդ, Նոր Մարդով, Յիսուս Քրիստոսով, քարոզուած և ապրուած Նոր կեանքի մը գոյութիւնը:

Բովանդակ Քրիստոնեայ աշխարհը կը ցնծայ, կը զուարճանայ Յարութեան Տօնին, ներքին բաներ մը կը զգայ՝ անգրագառնալով իր կեանքի պայմաններուն վրայ: Հայ-Քրիստոնեայ աշխարհը, իրեն բնիկ և աղուորիկ ԶԱՏԻՎով, հայենակ հրապոյր մը կուտայ իր ցնծումին և բերկրանքին, ողջմիտ և նրբազգած ներքնատեւութեամբ մը: Հայ Քրիստոնեայ աշխարհին Զատիկը, և Զատիկը տօնախմբաւ իր արտայայտութիւնները ուշագրաւ կերպով ներշնչող են: Ա-

մէնէն ռամիկ երգիքներու տակ իսկ հոգեկան զուարթութեան, կրօնական ողջ կայծի մը շողերը կը զգաս: Եւ նոյն իսկ հագուստի կապուստի այլազան գոյներու մէջ, տիրողը կարմիր ըլլալու պայմանով, Զատիկ բռներու հայացի աւանդութիւններուն մէջ կ'ընդնշմարես նորոգուած ըլլալու գոհունակութիւնը, և ողջագուրումներու և շնորհաւորութիւններու մէջ անուշ, խեղացի ժպիտներու փթթումը: Հայ-Քրիստոնեան պրզէն իր Մեծ Պահքով, իր խոստովանանքով, իր ապաշխարանքով, իր հաղորդով իր կրօնական պարտաւորութիւնները կատարած, մարմնապէս թեթեւցած, հոգեպէս նորոգուած, կ'ողջունէ և կը տօնախմբէ Զատիկը: Եւ այս բոլորը տգէտ, նախապաշարուած համայնքի մը մթին և անիմաստ գործերը չեն: Նորոգումը պէտք մըն է, և այդ պէտքը կը զգայ բարի մարդը: Եթէ խեղճ գիւղացին տգէտ է, նախապաշարուած է, բայց իր ներսը այդ հաւատքը ծնցնողները, իրեն հոգիի այդ կրթութիւնը տուողները տգէտ չէին, նախապաշարուած չէին: Խորունկ համոզումի և մարուր կեանքի գիտակցութեամբ ուժաւորուած մեծ մարդիկ էին անոնք: Եւ բարի գիւղացին գիտցած է անդրդուելի, հաւատարիմ աւանդապահը ըլլալ իրեն տրուած մաքուր քրիստոնէական կրթութեան մը: Այս է պատճառը որ Հայ-Քրիստոնեան Զատիկը կը զգայ և կ'ապրի այնքան հաճոյքով և իրական նորոգութիւնով մը:

Եւ Զատիկի առթիւ այս նորագումն է որ կը գրաւէ ուշադրութիւնս: Եւ այն խօսքերը զորս այս խորհրդածութիւններուն ճակատը դը-

րոշմեցի, Նոր Մարգուն (Քրիստոսի) նորոգումով (Յարութեամբ) նորոգուած և իր բոլոր էութեամբ հարած շութենէ Աւետարանչութեան ներքուած Մեծ-Քրիստոնեայի հաւատքին և գիտութեան հառադայթումներն են, միշտ նոր, միշտ կենսատէտ, միշտ զգաստացողիչ ճառագայթումներ:

Նորոգունեցէ՛ք: Այս է ամբողջ իմաստը Աւետարանին: Նորոգունեցէ՛ք. այս է բովանդակ նշանակութիւնը Յարութեան: Նորոգունեցէ՛ք. այս է բոլոր զօրութիւնը Պողոսի խօսքին և փորձառութեան: Ես Տաճարի ընթերցողներուն և ուրիշ հետաքրքիրներուն պիտի նուիրէի Զատիկի առթիւ կողոսացուոյ Երբրդ գլխը ամբողջ, գիտելով ասոր մէջ հիանալի մեթոտը խաղաղ, գործօն և յառաջացուցիչ կենցաղի մը որուն պէտք ունի Հայ ազգը այսօր: Անհոտներու իրաւունքին պահպանութիւնը և ապահովութիւնը, ընկերական պայմաններու բարւոքումը, ազնուացումը և կատարելագործութիւնը՝ հիմնուած են ինքնաւնորոգութեան վրայ, որ Քրիստոսի Յարութեան ամբողջ բարոյականը կը խառնէ իր մէջ: Իրարու յոյժեղ, մերկանալ հին մարդը իր բոլոր մանրամասնութիւններով, և ասոր տեղ հագուել Նոր Մարդը, Քրիստոսի, Յարուցեալ Քրիստոսի նկարագիրը, այն անթերի, անսուղիւտ նրկարագիրը, ճիշտ Արարչի պատկերին պէս:

Սաւոր իր բոլոր երանգներով և կերպերով անիծած է իւրը մեր ազգին: Կեղծիքը, շահամուլութիւնը, տըխուր եսականութիւններու շահատակութիւնները, խանգարած են ու կը խանգարեն Հայութիւնը ամէն կողմ:

պէտք է արմատախիլ ընել սուսին այս ձեւերը և փճացնել ատոր տիրապետութիւնը: Ասիկա մեր ազգին Յարութիւնը, Նորոգութիւնը պիտի ըլլայ: Հին առարկաները թանկագին են, բայց սուտով, կեղծիքով հինցած բարքերը ապականութեան կը տանին անհատներն ու ազգերը:

Հայ եկեղեցւոյ հարազատներ, անգամ մը դիտեցէ՛ք ձեր չորս դին, պահ մը քննեցէ՛ք ձեր կեանքին և գոյութեան պայմանները. պիտի չգըտնէ՞ք ՍՈՒՏին մարմնաւորումն ու կեղծաւորումը՝ իր նրբութիւններով և միանգամայն իր այլանդակութիւններով: Աւաքեալին նկարագրած աշխարհը, որ բռնուած է պոռնկութեան, սղծութեան, բիծի, չարացանկութեան, ագահութեան պատրիշ ցանկերով, կարծես մեր աշխարհն եղած ըլլար. ամէն կողմ կը տիրապետէ բարկութիւն, սրտմտոթիւն, չարութիւն, հայհոյութիւն, խեղկատակութիւն, սոսորիւն: Իբր թէ Հայոց հոգին պողպատուած չըլլար Փըրկչին փառաւոր նորոգութեամբ. իբր թէ Լուսաւորչին անձնուրացութիւնը Հայու մեծութեան համար՝ պանդոյրի մը թշուառութիւնը եղած ըլլար. իբր թէ Սահակ-Մեսրոպի տքնութիւններն, յորհմի Հայր Հայ յորհմ, ոչնչութեան նուիրուած աշխատանքներ եղած ըլլային. իբր թէ Վարդան, Վահան և իր նմանները մաքաւանդութեան կոյր գործիքներ դարձած ըլլային, իբր թէ Բաբգէններ, Ռձնեցիներ, Շնորհալիներ, Մագիստորաններ, Աշտարակեցիներ, անձնական կիրքերու տիրապետութեան նուիրուած հերոսութիւններու տիրապետներ եղած ըլլային, հեռի՛ դիտութենէ, ճշտագատութենէ,

ազգային կեանքի հասկացողութենէ: Այո՛, իբր թէ այս բոլոր վիթխարի իրականութիւններ, այս բոլոր հոյակապ դէմքեր ու դէպքեր նշանակութիւն չունենային Հայ կեանքին համար, որ այսօր իրական և ազնուական շարժում մը չունի դէպի նորոգութիւն, մինչ մեր ազգին էութիւնը ամէն կողմէ նորոգուեցէ՛ք կը պառայ զինքը ներկայացնող անհատներուն և մարմիններուն:

Տեսէ՛ք ամէնէն տուաջ, Հայեր, ձեր առանին կեանքը: Ո՛ր և է չափով չէ՞ք զգար նորոգութեան պէտքը: Խախտած է պատկոռանքը մեծի և պզտիկի մէջ. ընտանեկան սրբութիւնը, Հայ օճախին մաքրութիւնը սպառնալիքի տակ է: Եւ Հայու ընտանեկան կեանքը՝ իր պատմական և աւանդական սուրբ բարձրութեան դիտակցութեամբ կը պառայ. նորոգուեցէ՛ք:

Դիտեցէ՛ք, Հայեր, ձեր կրթական կեանքը: Ազգերն այսօր զօրաւոր են ոչ այնքան իրենց զօրանոցներով, որչափ իրենց դպրոցներով: Հայը կրթութեան և դատարարական մեծ ընդունակութիւն ունի: Ան երբ պատրաստուի իր գոյութեան և սկզբունքներուն հաւատարիմ պայմաններով, կրնայ ցաւաքնել իր ցեղին յատուկ մեծութիւններ: Բայց Հայու դպրոցներն այսօրուան պէտքին համար կազմակերպուած չեն: Իրական պէտքէն աւելի երեւակայական կերպը կ'իշխէ մեր կրթական կողմնաձիւն վրայ: Շատեր չեն գիտեր թէ ի՞նչ կ'ընեն: Հայու կրթական կեանքը այսօր մեծ միջոցով մը չըջապատուած է: Օտմ. Սահմանադրութենէն ի վեր մեկն դեռ քաջ մը չառիմի դէպի առաջ.

ընդհակառակն կը պնդեմ որ քաջ-
շերով ես ալ գացիմք: Այսօր բիրտ
ոյժը չապահովեր անհատին և ազ-
գերուն յաջողութիւնները: Մտքի ու-
ժը, բարոյական պատրաստութիւնը
կ'ապահովէ կեանքը: Ո՛րչափ լաւ կըր-
թուած է մարդը, ո՛րչափ աղէկ պատ-
րաստուած է, այնչափ յաջող և ար-
դիւնաւոր կ'ըլլայ անոր վազքը դէպ
ի յառաջ: Ուրեմն ո՛ւր են ձեր վե-
րանորոգած դպրոցները: Սահմանա-
դրութեան անխուսափելի ազդու-
թիւններով կը դբաղիք աւելի, քան ա-
նոր անհրաժեշտ բարիքներով: Բըռ-
նապետութեան շղթաներէն նոր ար-
ձակուած երկիրներու համար՝ ճակա-
տագրական է բարիքներուն քով չա-
րիքներու սև գոյութիւնը: Զընդան-
ներէ յանկարծ լոյս աշխարհ նետ-
ուող ազատորդներու պէս, մէկէն
չկրցաք նայիլ ազատութեան արեւ-
ւին: Անոր շողշողուն ճառագայթները
չլացուցին ձեր աչքերը: Հերիք էր
քիչ մը բնական խարխափում ու
շուարում: Անդրադառնալու էիք նո-
րոգութեան պէտքին. մերկանալու
էիք հիւն մարդը իր բոլոր գործերով,
Ազատութեան Աստուծոյն պատկերին
պէս անստգիւտ, նոր պատկերով մը
նորոգուելու էիք և նորոգելու էիք
ձեր կրթութեան յարկերը, որոնց ար-
տաքին և ներքին կազմակերպութիւն-
ները բարձրագոյ կը պուան. նորոգ-
ուեցէ՛ք:

Նայեցէ՛ք ձեր եկեղեցիներուն և
խորենացիին ողբերը, և ողբերու Մար-
գարէին՝ Երեմիայի շեշտերը կարծես
չատ քիչ բան կ'արտայայտեն մեր ե-
կեղեցիներու արդի վիճակէն: Մոլե-
ռանդ չըլլանք՝ թայց տգէտ ալ չըլ-
լանք, մեր եկեղեցւոյն նշանակու-

թիւնը չհասկնալու չափ մեր ըն-
կերական ու ազգային գոյութեան
մէջ: Ո՞վ վնաս տեսեր է բարեպաշտ
և առաքինի կեանքերու զարգացու-
մէն. ո՞վ ուրացած է աւետարանա-
կան ճշմարտութիւններու այս աշխար-
հի բերած օրհնութիւնները՝ բացի
անզգամներէ, որոնք Դաւիթի օրէն ի
վեր կ'ըսեն իրենք իրենց թէ «ո՛չ գոյ
Աստուած»: Ո՞վ պիտի յանդգնի, իր
ճշմարիտ Հայու համոզումով, ըսել
մեզի թէ Հայ եկեղեցին չարիք մը ե-
ղած է, կործանած է Հայը, փճացու-
ցած է անոր առնականութիւնները,
եղծած է անոր ազգային նկարագիրը:
Ես իմ բոլոր լայնախոհութեամբ, իմ
բոլոր քննադատութեամբ չեմ կրնար
երեւակայել իր ազգին պատմութիւնը
հասկըցող անհատ մը, որ յանդգնի
հայհոյել այդպէս: Հայու եկեղեցին
Հայու ազգային կեանքն է: Բայց այդ
եկեղեցին եղած է անիմանալի, և նը-
շաւակ անարգանքի: Հայ եկեղեցին իր
կենդանութիւնը զգացնելու համար
պէտք ունի նորոգութեան: Անոր գո-
յութեան ամէն մասերը, արտաքին
թէնքերին, կը պուան. նորոգուեցէ՛ք:

Քրիստոս եթէ մնար Խաչի ար-
հաւիրքին տակ, եթէ չպատուուէր
հնութիւնը ծածկող վարագոյրը Տա-
ճարին մէջ, եթէ արեւը չանցնէր խա-
ւարման ծիրը, եթէ Յարութեան
փառքերը չողողէին տխրած սիրտերը՝
այսօր պիտի չունենայինք այս հըս-
կայ քաղաքակրթութիւնը: Յարուցեալ
Քրիստոսի ազդեցութիւնը վերական-
գանութիւն մը տուաւ աշխարհի:
Քրիստոնէութիւնը, նոր մարդոց կրօն-
քը, տիրապետեց: Յարուցեալ Քրիս-
տոսի անուան շուրջը բոլորեցան հա-
րիւրներ ու հազարներ շատ քիչ ժա-

մանակի մը մէջ, նոր կեանքը իրա-
կանութիւն մը եղաւ: Մեծ Յեղափո-
խութիւնը հասաւ իր նպատակին, ծը-
նաւ արդի Գաղափարութիւնը, որ
եթէ կանգուն է, եթէ պիտի տեսէ՝
այս ալ պիտի ըլլայ միայն և միայն
իր ամուր և օրհնութիւնաբեր սկզբ-
ունքներով, իր բարի կողմերով:

Հայ Ազգը գերեզմանային կեան-
քէ մը վերջ, իրաւունք ունի վայելե-
լու իր նորոգութեան տիտղոսները:
Իր նորոգութիւնը պէտք է հիմնուի
Պողոսի բարոյական, կրօնական սկզբ-
ունքներուն վրայ: Հայր պէ՛տք է
սէ՛. պէտք է մերկանայ հին մարդը,
պէտք է նորոգուի, գիտութեամբ նո-
րոգուի, Արարչի պատկերին պէս ան-
թերի, իր զմայելի գեղեցկութեան,
իր շքեղ տոկունութեան, իր կենսա-
ւէտ ճառագայթումներուն մէջ:

Հայաստանեայց եկեղեցին ներ-
կայացնող պատուական ժողովուրդ,
նորոգուեցէ՛ք ալ՝ նետելով հին մար-
դը ձեր էութենէն: Նորոգուեցէ՛ք
ձեր նախնեաց մաքուր կեանքով, ա-
նոնց անբիծ և կազմուրիչ հաւատ-
քով: Նորոգուեցէ՛ք Հայու կենդանի
արիւնով. սիրեցէ՛ք ընտանեկան սրը-
բութիւնը, ազգային մեծութիւնը:
Նորոգուեցէ՛ք Հայ-բրիտանեայի կո-
րովով և առաքինութեամբ: Նորոգ-
ուեցէ՛ք ձեր գպրոցներով, ձեր եկե-
ղեցիներով, ձեր անհատական և ըն-
կերական կեանքերով: Նայեցէ՛ք, բնու-
թիւնն ալ նորոգուած է զուարթ և
ժպտուն: Չատիկը ձեզի նորոգութիւն
կ'աւետէ. Բրիտանոս, նորոգիչ Տիեզե-
րաց, իր փառաւոր յաղթանակին յի-
շատակներով, կ'ազդարարէ ձեզի նո-
րոգութեան պէտքը: Բրիտանեայեց
Մեծ-Քարոզիչը իր փորձառութեան

ուժով կ'ըսէ ձեզի. նորոգուեցէ՛ք:
Այս տիեզերական շքեղ նորոգու-
թեան մէջ ձեր ցնծումներով, ձեր
ազգային կեանքով տօնեցէ՛ք Չատիկը,
կազմուրեցէ՛ք, սիրեցէ՛ք ի՛նչ որ
Հայուն է, առանց ստերու: Այսպիսի
ըմբռնում մը Չատիկի տօնին, Բրիտ-
տանի Յարութեան, պիտի փրկէ ձեզ:
Մ'ն ուրեմն նորոգուեցէ՛ք ճշմարիտ
Հայ-Բրիտանեայի մը պէս:

ԲԱՐԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

«ԶԷ՝ ԱՍՏ, ԱՅԼ ՅԱՐԵԱՒ»

Յաւիտեական յուռ Դեքսելանի՛,
Պաստե՛, պաստե՛ ինձ վեպ Դերեզմանի,
Դեպք սասնածային, հրա՛ջ անկրկան.
Հրեշտակն երգեց. — «Զե՛ սաս, այլ յարեաւ»:

Դիչե՛ր մեծ, վրսեւ, վայրկեան ահաւոր,
Ըսե՛ ինձ, ո՛ր է Երկնի Թագաւոր.
Կանգնեցի խորան նոր պաշտելութեան,
Երբ Վիկն աւետեց, — «Զե՛ սաս, այլ յարեաւ»:

Սուրբ Երուսաղեմ, Բաղա՛ջող հըսկայ,
Խօսե՛ ինձ, ո՛ր է արքայից Արքայ,
Նա որ աղօթեց մաղթանք Փրկութեան.
Դարեւ ձայնեցին. — «Զե՛ սաս, այլ յարեաւ»:

Դու, Դողգոքայ լերի, զագաթ ապերախ,
Բայց պաստաւեցիր ազգերու յաւ բախս.
Ապառաժներէդ սոսկաց Բարաբքան,
Երբ Սիօն ոգեց. — «Զե՛ սաս, այլ յարեաւ»:

Արշաղոյսն այն օր չէր տոկոսական,
Խաչէն առած էր գոյն մը յաղթական,
Ո՛չ ճգնաժամի բոսորը ասկայն,
Զի Զորը յսնաց. — «Զե՛ սաս, այլ յարեաւ»:

Այդ սոսնոսուն՝ հրճուանք կար երկինք,
Յիսուս ա՛յլ վերեւ էր, հաւակ փառք, երգ ինք.
Սուրբեր կ'երգեին. — «Փառք Գուր Գաղա-
սեան»:

Տիեզերք գոյեց. — «Զե՛ սաս, այլ յարեաւ»:

Վարդ արշաղոյսներ, Չափի օրերուն,
Մարդու փրկութեան կը բերե՛ք զարուն,
Գարուն, սօ՛ւ ծաղիկան կեանքի, յարութեան.
Ինչո՞ւ չը կրկնեմք. — «Զե՛ սաս, այլ յարեաւ»:

ՏԻԵՐԱՅԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Քրիստոսի հրաշափառ Յարութեան առթիւ, մասնաւոր հաճոյքով Տաճարի բարեպաշտ ընկերացողներուն Կը ներկայացնենք յետագայ հոյակապ յօդուածը՝ Ամերիկեան լուրջ ամսագրէ մը քապուած, որուն մէջ հաւատացեալը Յիսուսի Յարութեան մեծ նշանակութեան հետ մէկտեղ, առիթը պիտի ունենայ խորապէս մտածելու այն հսկայ տարբերութեան վրայ որ կը գտնուի իրենց անուշադիր կերպով եւ կամ լուրջ ուշադրութեամբ դիտելուն մէջտեղ: Նի թը շատ կարեւոր է, եւ կը յուսանք յառաջիկայ թիւով մը անդրադառնալ անոր վրայ: Աւելցնենք թէ սոյն զեղեցիկ յօդուածը՝ խմբագրութեանս յանձնարարութեամբ՝ Տաճարի համար հոյերէնի վերածած է Սկիւտորի այլըկանց Ամերիկեան բարձրագոյն վարժարանի նախկին շրջանաւարտ Օր. Նոյիմի Քրիկեան, իր շընորհալի աշխատակցութեան սկզբնաւորութիւն մ'ընելով այս կերպով:

ՏԵՍՆԵԼՈՒ ԿԵՐՊԵՐ

ԵՒ

ՃՇՄԱՐԻՏ ՏԵՍՈՂՈՒԹԻՒՆԸ

Յաւանդեալ քննադատ մը, պատկերներու ցուցահանդէսի մը մէջ, դեղեցիկ նկար մը դիտած միջոցին կ'ըսէր. «Երբեք այսքան գեղեցիկ գոյներ տեսած չեմ իրական վեցջաւորսի մը մէջ», ձարտար արուեստագէտ մը որ նոյն պահուն հոն կը դտնուէր, մարդուն դիտողութիւնը լսելով, սա կարճ բայց նշանակալից պատասխանը տուաւ անոր. «Չպիտի՞ փափաքէիր որ կարենայիր տեսնել:»

Շատեր կան որ իրերը չեն տեսներ այնպէս ինչպէս որ են, և կը գոհանան միայն արտաքին երևոյթէն, որովհետեւ տեսարանի մը ներքին գեղեցկութիւնը տեսնելու կարողութիւնը արթնցած չէ իրենց մէջ: Ռըսթին, անգլիացի հայտնաբերող գեղարուեստագէտը, շատ իրաւունքով ըսած էր. — «Հարիւր լսող մարդոց մէջէն մէկը միայն կրնայ խօսիլ, հարիւր խօսող մարդոց մէջէն մէկը միայն կրնայ խորհիլ, և հարիւր խորհող մարդոց մէջէն մէկը կրնայ տեսնել միայն:»

Ամէն դպրոց՝ կերպով մը կոյրի գոյրոց է, ուր բնութեան գեղեցկութեան և կիսանքի նշանակութեան անտարբերակ կը ռորվին տեսնել իրերը ինչպէս որ են և իրենց ամբողջութեանը մէջ, կը սորվին տեսնել զանոնք իրարու հետ ունեցած առնչութեան մէջ և իրենց արեւելական նշանակութեանը մէջ:

Չատկի առաջին առտուն, Քրիստոսի Յարութեան մասին տրուած զանազան մեկնութիւններն այս ճամարտութիւնը կ'ապա-ցուցանեն: Ըստ Ս. Գրքի արձանագորութեանց, նկարաչրի երեք տարբեր արպարներ կը գտնուին Քրիստոսի գերեզմանին մօտ, այգուն, և ամենքն ալ «տեսան» ինչ որ տեղի ունեցած էր (Յովհ. Ի. 1-8): Անոնք ամենքն ալ տեսան նոյն բանը. բայց միեւնոյն կերպով չտեսան և Աւետարանիչը բնագրին մէջ երեք որոշ Յունական բայեր կը գործածէ, (βλέπω, θεωρώ, εἶδω) բայեր, որոնք տեսնելու զանազան կերպեր կը ցուցնեն, բայց որոնք ամենքն ալ թարգմանուած են միակ «տեսնել» բայով:

Մարիամ Մագլաղենացին առաջինն էր որ եկաւ Գերեզման, ինչպէս արձանագրուած է Յովհաննու Աւետարանին մէջ: Այն օրէն ի վեր որ իր մեղքերը ներուեցան, միշտ պատրաստ էր իր անձը նուիրելու Յիսուսի: Մարիամ տեսաւ (βλέπει) գերեզմանին քարը թաւալած, և սա երկիւղած բայց սխալ եղբակցութեան յանգեցաւ թէ Տիրոջը մարմինն առնուած և ուրիշ տեղ մը դետեղուած էր. եղբակցութիւն մը՝ որուն կարելի է յանդիլ առանց խորհելու: Իր զգացումներուն թափը իր խորհելու կարողութիւնը թթացուցած էր և ինք բուրովին չփոխած էր: «Տիրոջը մարմինը գերեզմանէն տարե՞ր են»: Այս էր աղաղակը այդ հոգիին, որ անկարող էր բացատրութիւն մը տալու աչքերուն առջեւ պարզուող երևոյթներուն:

Ահաւասիկ կին մը, որ տեսաւ և հաւատաց պարտապ գերեզմանին, առանց ու-

նենալու ամենազգալի գաղափարը որ իր Տէրը կ'ապրէր յաւիտենապէս: Պարապ գերեզմանէն աւելի բան մը պէտք է, Յարութեան ահագին ճշմարտութիւնը մեր սրտերուն ընտանի դարձնելու համար: Թափուր գերեզմանը կրնայ տարբեր կերպերով ալ բացատրուիլ, Բրիտանեայ Եկեղեցւոյ տուած բացատրութիւններէն զոմս: Կրնայ ըսուիլ որ Բրիտանոս ընտել գերեզման դրուած չէր. կամ թէ մուած չէր և տեսակ մը մարած վիճակի մէջ էր երբ զինք թաղեցին: Կրնայ ըսուիլ որ իր բարեկամները փոխադրեցին իր մարմինը աւելի ապահով տեղ մը, և կամ թէ թշնամիները գողցան զայն մինչ զինուորները կը քնանային: Այս տեսակ և տարբեր բացատրութիւններ որոշած են յիշաւի, բայց անոնցմէ ո և է մէկն ընդունիլը Բրիտանեական հաւատքին ուրացումն է:

Այս կինը կրնայ ընդունուիլ իբր արիւնքը ժողովրդական չխորհող միտքի մը. մինք մը որ մակերեսէն անդին չանցնիր և ընականաբար սխալ եզրակացութիւններու կը յանգի միշտ: Մարդոց ամենամեծ թերութիւնն է չխորհիլը: Կը վարձեն մարդիկ որպէս զի իրենց համար խորհին: Կը նախընտրեն այն քարոզիչները որոնք իրենցմէ ամէնէն քիչ կը պահանջեն խորհելու կարողութիւն: Եթէ Յարութիւնը, մեզ համար, կը նշանակէ միայն պատմական դէպք մը թէ Յիսուս մեռաւ և երեք օրուան մէջ գերեզմանէն ելաւ, մենք բարոյական և հոգեկան նոյն կացութեան մէջ գըտնուած կ'ըլլանք, ուր կը գտնուի այդ մասին բոլորովին սոգէտ եղող մը: Տեսնելու կերպ մը կայ որ չի զանազանութիւն չտեսնելէն: «Կուրութիւն»ը նախապէս կը նշանակէր աղօտ կերպով տեսնել: Շատ մարդիկ կան այսօր որ աղօտ կերպով կը տեսնեն, և անկապակցօրէն կը խորհին իրենց տեսած բաներուն վրայ. և ասոնք ամէնքն ալ կը նմանին ճիշտ Մարիամ Մագթաղենացիին որ ճշմարիտ է թէ տեսաւ գերեզմանին պարապութիւնը, բայց չկրցաւ տեսնել մեծութիւնը այն կեանքին որ կարելի դարձաւ Բրիտանոսի փառաւոր յայթանակովը:

Սակայն պատմութիւնը կը շարունակ-

ուի: Երբ Պետրոս և Յովհաննէս իմացան այս լուրը, անոնք ալ խռովեցան, և ակնհայտ կերպով կ'ապագայ յայտնեցին տրուած բացատրութիւններուն վրայ: Այն մեծ յոյսերը զորս կը տածէին Յիսուսի նկատմամբ, հաւանաբար վերականգնացան այն վայրկեանին: Անոնք թերեւս յիշեցին իրենց Տիրոջ քանի մը խօսքերը և նոր նշանակութիւններ տուին անոնց, և զգացին թէ դեռ ամէն բան կորսուած չէ: Պետրոս աճալարանօք եկաւ գերեզման և տեսաւ գերեզմանաքարը որ մէկդի թաւալած էր. բայց ատկէ ալ աւելին տեսաւ: Տեսաւ (θεωρεῖ) Յիսուսի կտաւէ հագուստները որոնք ասդին անդին տեսուած էին և անոր վարչամտը որ հազուադէպ հետ չէր, այլ ծալուած մէկ կողմ նետուած էր: Զխորհող մարդու մը համար, այս մանրամասնութիւնները պարզապէս կը նշանակեն թէ այն բարեկամները որոնք մարմինը փոխադրեր են, տարօրինակ կերպով վարուեր են. և կամ թէ գողերը շատ վեհանձն են եղեր այսչափ նոր կտաւներ ձգելով հոն ծալուած: Գողերն ընդհանրապէս ամէն ինչ խառնաշփոթ կը ձգեն: Յանցանքի ներքին զգացումը աճալարանքի կը մատնէ զիրենք: Գողերու համար օսվորական չէ իրենց ետեւ բան թողուլ. իրենց գործը հետ առնիլ է: Գողերու համար լաւագոյն տեսակ կտաւէ հագուստներն աւելի մեծ արժէք ունէին, քան թէ Բրիտանոսի կենսազուրկ մարմինը:

Բայց այն մարդը որ կը տեսնէ և կը քննէ իրերը, կը հասկնայ թէ քնու գողերու գործ չէ եղածը: Աւելի՛ բարեկամներու գործ է: Բայց որոնք կրնան ըլլալ այդ բարեկամները որ այդ տեսակ պատահականաբարութիւն մը յանձն կ'աւելնեն, առանց Պետրոսի և Յովհաննէսի և միւս առաքեալներուն զիտութեան: «Յիսուս ինք միայն կրնայ բրած ըլլալ այս գործը», խորհեցաւ Պետրոս ինքնիրեն: Պետրոս տեսաւ ինչ որ Մարիամ Մագթաղենացին տեսած էր. բայց ան քննեց եղածը աւելի՛ մօտէն և տարբեր մանրամասնութիւններ ալ տեսաւ: Ան թէ՛ տեսաւ և թէ անդրադարձաւ եղածին վրայ. բայց տակաւին ինքզինքն

անկարող զգայ ու է եղբայրացութեան յանգեալու։ Անիկա հասաւ յուսալից այն միջին կէտին զոր Պղատուն կը կոչէ իմաստութեան սկիզբը։ Այսպէս, կը կարդանք. «... ու զնայ իր մտքին մէջ զարմանալով եղածին վրայ)»։

Պետրոս, մաքի նոյն վիճակին մէջ գրտնրւող ժողովրդի ստուար մէկ մասը կը ներկայացնէ։ Ան կը տեսնէ, վարկածներ կը չինէ, և կը զարմանայ։ Եթէ Յիսուս Քրիստոսի Յարութիւնը մեզի համար պիտի նշանակէ թէ անլուծելի խնդիր մ'ալ աւելցած է արդէն եղածներուն երկար շարքին վրայ, այն ատեն աւելի աղէկ է որ բնաւ չհաւատանք անոր։ Կը յարգենք տրամաբանութիւնը և մտածումը, բայց այն ճշմարտութիւնները որոնցմով մարդիկ կ'ապրին, տրամաբանութեանց եղբայրացութիւններ չեն որքան կենդանի գողտգոտներ, որոնք յանկարծ կ'արթննան մարդկային սըրտին մէջ վսեմ վայրկեանի մը միջոցին, և տրամաբանական ու է եղբայրացութիւն կամ ապացոյց չի կրնար ջնջել։ Տեսականը և գործնական կեանքը շատ ու շատ սարքեր են իրարմէ։ Ճօն Սթիւարթ Միլ այն տեսակ գաղափարներ ունի փիլիսոփայութեան մէջ, որով անտատուած մը կրնայինք նկատել զինք. սակայն գործականին մէջ ամէն ճաշակեղանի միջոցին կ'աղօթէր ան, այնքան ջերմեամբութեամբ որքան պէտք է լինէ ճշմարիտ Քրիստոնեաները։ Քրիստոսի Յարութիւնը տեսականէն աւելի բան մ'էր Պետրոսին համար, ուստի որով իր սնունդ պիտի չյիշուէր տաքեղական Եկեղեցիին մէջ։ Զարմացումը աստիճան մը աղէկ է։ Անտարբերութենէ կամ բացարձակ ուրացումէ աւելի յոյս ներշնչող վիճակ մ'է ան։ Փիլիսոփայութեան սկիզբն է։ Բայց մենք պէտք է սկիզբէն անդին անցնինք, իմաստասիրութենէն անդին, ըմբռնելու համար Յարութեան գաղափարը, որ թէ՛ կրօնական և թէ՛ բարոյական աւսակէտով մեծ արժէք ունի մեզի համար։

Բայց երբորդ անձ մ'ալ կայ որ ներկայ եղած է այս տեսարանին։ Սիրիյի Յովնանէն է։ Իր բնազդները ճշմարիտ են և իր տեսնելու կարողութիւնը սուր է։

Ան իր Տէրը ուրիշներէ աւելի կը ճանչնար։ Յովնանէն տեսաւ ինչ որ Մարիամ տեսած էր, նշմարեց մանրամասնութիւնները և պատմեց իրողութիւնը ինչպէս Պետրոս ըսած էր։ Բայց փոխանակ հապճեպով բացատրութիւն մը տալու կամ զարմացման վիճակի մը ենթարկուելու, ան ըմբռնեց ամբողջ եղելութիւնը և գիտցաւ անմիջապէս թէ Յիսուս Յարութիւն առած է։ Յովնանէն այս ճշմարտութեան հասաւ ոչ թէ որտաքին երեւոյթներէն հետեցնելով, որովհետեւ Մարիամ և Պետրոս ալ այս բոլորը գիտէին, ոչ ալ խորհրդածութիւններու շարքէ մը վերջ. այլ ամենէն աւելի անիկա գիտակցութիւնը ունէր Յիսուսի հոգեկան ներկայութեանը իր մէջ։ Ան ամենէն աւելի զգայուն էր՝ անոր ներկայութեանը։ Երբեմն մարդ գիտէ թէ մէկը կայ անհակիրճ մէջ։ Բան մը չի տեսներ կամ չի լսեր, բայց կ'զգայ թէ մէկը կայ իր մօտ։ Յովնանէն պէս նուրբ հոգեկան հայեցողութիւն ունեցող մէկը պիտի զգար թէ իր Տէրը կ'ապրի։ Ան ոչ մէկ գերեզման այցելեց, ոչ ալ ուրիշ մը հարցաքննեց, հետեւութիւնը սա եղաւ որ անիկա տեսաւ (εἶδεν) և հաւատաց։

Այս կերպ տեսնելը գիտնալ է, ճշմարտութիւն մը իւրացնելն է այն լուսնի մասին զոր կը տեսնենք և որուն տիրանալով մեր էութեան մէկ մասը կ'ընենք զայն։ Այս կերպ տեսնելը տեսականին կեանք հազցնել է, և աչքի ներկայացած տեսաբանները հաւատքով ստեղծել է։ Իրականին երեւութապէս հոկատող մանրամասնութիւններու մէջէն ճշմարտութիւնը դուրս բերելն է՝ մշտապէս զայն խրացուցած ըլլալու գաղափարական գոհացումով։

Յովնանէն տեսաւ և հաւատաց, և ասիկա կը նշանակէ որ սուսըին անգամ ան բմբռնեց թէ Յիսուս չէր յաղթուած մահուանէ, թէ մեղքը չէր յաղթողը, թէ թշնամին պարտուած էր, թէ Յիսուս ողջ էր, և թէ իր հոգեկան խաղաղութեան և իր մշտական ներկայութեան խոստումը կտատուած էր։ Այս հաւատքն էր որ ամբողջեց Առաքեալներուն վստահութիւնը, և զրկեց զանոնք քարոզելու յարուցեալ

կեանքի մը աժովը, և այս հաւատքը և զաւ Բրիտանիական Եկեղեցւոյ անկիւնա-
քարը: Վերջուր Եկեղեցւոյ մէջէն այն
ճշմարտութիւնը թէ Յիսուս յաղթեց մահ-
ուան և թէ կը թափաւորէ թագաւորու-
թեան մը մէջ որուն աթոռը մարդոց սիրտն
է, վերջուր կեանքը, ներշնչութիւնը և այս
համոզման արդիւնք եղող ուժը, և պա-
րապ կեղեւ մը կը մնայ, մարմին մը
ուրկէ մեկնած է հոգին:

Յարութիւնը, այսպէս, միայն Աստ-
ուածաբանական Վարդապետութիւն մը չէ,
այլ ճշմարտիւն և Բարիին յաղթութեան
մէկ արձանագրութիւնը: Յիսուս Բրիտոս
մեռած չէ. ան կ'ապրի Աստուծոյ մէջ. ան
կը փառաւորուի և կ'ապրի իր հետեւորդ-
ներուն մէջ. ինչպէս Յիսուս մեռաւ, այն-
պէս պիտի մեռնինք մենք ալ: Մենք պէտք
չէ միայն հաւատանք Յարութեան Բրիտո-
սին, այլ պէտք է ապրինք Յարութեան
կեանքը: Այս վերջին իմաստով, Յարու-
թիւնը մեզմէ դուրս եղող պարագայ մը չէ,
այլ մեր մէջը գտնուած կեանքը: Մենք
Յարութեան գաղափարը անորոշ ժամանակ-
ներու յետաձգելու վատնգին մէջ ենք,
մինչդեռ կրօնական արժէք մը ունեցած
ըլլալու համար, պէտք էր որ ան, Յարու-
թիւնը, մեզի համար նշանակէր գերագոյն
հոգեկան կեանքի մը սկզբնաւորութիւնը
ներկային մէջ: Այս կերպով էր որ Յով-
հաննէս ըմբռնեց: Տեսաւ և հաւատաց: Իր
հաւատքը վերակենդանացած էր և այդ
ատենէն սկսեալ ան ապրեցաւ Յարութեան
Բրիտոսի ճշմարտութիւնով: Այս կերպով
էր որ Պօլոս ըմբռնեց՝ ան տեսած էր Տէ-
րը և այդ օրէն ի վեր ամէն բանէ զրկեց
ինքզինքը որպէս զի արժանի ըլլայ այդ
Յարութեան:

Ամենագորաւոր, թէպէտ ամենապարզ
ապացոյցը Յարութեան, Բրիտոսի աշ-
խարհի վրայ ունեցած ազդեցութիւնն է,
այն հոգեկան սէրը զոր կը տածէ Յիսուս
իր սկսած գործին և այն կեանքերուն
զորս բարեփոխեց և ազնուացուց Հաւատ-
քով: Բրիտոս ոչ միայն գերեզմանէն,
այլ և իր ժողովրդին սրտին մէջ յարու-
թիւն տուաւ: Իր հոգին կը կառավարէ և

իր կեանքը կանգուն կը պահէ զանոնք, և
իր սրտին մեծ Սէրը անոնց ուրախութիւնն
է գիշեր ցորեկ: «Հիմայ, կ'ապրիմ ես,
բայց ոչ թէ ես այլ Յիսուս կ'ապրի մէջս»:
Բրիտոսի Յարութիւնը կը նշանակէ Աս-
տուծոյ հետ ձուլուիլ, կը նշանակէ նոյն
ինքն Յիսուսը և Անոր յաւիտենական
կեանքը այժմէն իւրացուցած ըլլալ: «Ես
և մ' Յարութիւնը և կեանքը»: Յովհաննէս
տեսաւ ասիկա և հաւատաց:

ՄԸՐՏՕԲ ՄԱԲԻՆԵՐԸ

Անգլ. Թարգմ. ՕՐ. ՆՈՅԵՄԻ ՔՐԻԿԵԱՆ

“ՈՐ ՕՐԸՆԵՍ ԶԱՅՆՈՍԻԿ,,

(ԳՐԱԲԱՐԵՆ ՅԱՆԳԱՒՈՐ)

Ամենագում Տէ՛ր, Դուն կ'օրհնես իբրեւ հայր,
Անոնք որ զքեզ կ'օրհնեն զովն անդադար.
Եւ Դուն, ո՛վ Տէ՛ր, կ'սրբացնես յաւիտեան,
Անոնք միայն, որ միշտ քեզի կը յուսան:

Օրհնէ՛, կեցո՛ք քո ժողովուրդ եւ ժառանգ,
Պահէ լըումն Եկեղեցւոյ սուրբ եւ Թանկ.
Սրբէ ասոնք, որ սիրով ողջունեցին
Գու տունիդ մեծ վայելչութիւնն երկնային:

Փառաւորէ մեզի Դուն, հայր բազմագում,
Զօրութիւնովդ Աստուածային համակ գում.
Եւ մի՛ Խողուր յուսացեալներս որ ըլլանք,
Պիղծ ու դաժան մեր մեղքերուն գերի ցանգ:

Խողալովիւնդ տո՛ւր ամենայն աշխարհի.
Եկեղեցեաց, քահանայից՝ ժիր, բարի,
Բրիտոնեայ Թագաւորաց, եւ զօրաց,
Տո՛ւր ամենայն ժողովրդեանս, ո՛վ Աստուած:

Որովհետեւ անոնք անսպառ տուրք բարիք,
Ամէն պարգեւք, ամէն շնորհք ու կարիք,
Երկինքէն, Տէ՛ր, կ'իջնեն մեզի իբրեւ ցօղ
Ու մենք կ'օրհնենք յաւէտ հայրդ լուսաշող:

Սկիւսար.

ՍՈՒՐԵՆ Վ. ԳԱԼԵՄԵԱՆ

ՆԻՒԹԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

Շատ նին դրութիւն մը՝ զոր դաւանած են Հիւլէական և Եպիկուրեան դպրոցները։ Ժամանակ մը անյայտացու ան. բայց ուժեղ վերածնութիւնով մը իմաստասիրական զօրաւոր վարդապետութիւն մը դարձած է այսօր։ Պատճառն ո՛րն է որ բնական գիտութիւններու արտակարգ զարգացումովն ու դրական արգասիքովը աշխարհ փորձըւեցաւ ուեղի հաւատք ընծայել տեսանելի և չօչափելի իրերու։ Հոյ մը հոյակապ բնագէտներ և բնախօսներ եւս՝ բնական գութենէ ստեղծմով խոյս տուած՝ սկսան իրր նիւթապաշտ մտածել և այնպէս ցոյց տալ իրենց համաճարեղ գիւտերը։ Ի զուր չէ ուրեմն երբ այսօր գիտնականներէ ու մանք փիլիսոփայութեան սնանկութիւնը յայտարարելով, ճշմարտութեան համեմու ապահով միջոցը ցոյց տան միայն գիտութիւնը։ Նիւթապաշտ փիլիսոփաներն ալ իրենց սկզբունքներուն հակասած չեն ըլլար անշուշտ՝ երբ իրենց դատը նոյնացած հրաշակեն մեր օրերուն մէջ գիտութեան դատին հետ։

Իմաստասիրական աշխարհին մէջ երկու տեսակ նիւթապաշտութիւն կը դաւանին, մէկը մարդաբանական (anthropologique), միւսը փեղեքաբանական (cosmologique)։ Առաջինին վարդապետութեան համաձայն մարդը անասուններուն ունեցածէն աւելի ոչինչ չունի։ արդարութեան համար անոր ունեցած խորին բնազգը խանձ մըն է սոսկ, ոչ թէ անհրաժեշտ թելագրութիւնը ճշմարտութեան։ Մարդուն բարձր տեսչանքները, անշահախնդիր ճիգերը, դեղեցիկ յղղացքները սիրուն պատրանքներ են միայն։ Լոյսի, ճշմարտութեան, անհունին տեսչովը այրող սրտեր, բարեոյն, գեղեցիկին սիրահար հոգիներ պարզապէս ցնորախոհ անձեր են և մարդկութեան համար տառապող աղուաչներ։ Բաց աստի զգացողութիւն, դատողութիւն, կամեցողութիւն, գիտակցութիւն, անդրադարձում՝ անասուններու և մարդոց միջեւ գտնուած հասարակաց յատկութիւններ պիտի ըլլային։

Մարդը անասունէն կը տարբերի առարկանով միայն, բայց ոչ երբեք բնութեամբ։

Իսկ տիեզերաբանական նիւթապաշտութեան դաւանութեանը համաձայն, մարդն ու տիեզերքը կարելի է բացատրել միմիայն նիւթով։ Ամէն ինչ նիւթ է և նիւթակայ տիեզերական եղափոխութեան (évolution) կամ ձեւափոխումի։ Աստուած, Նախախնամութիւն, հոգի, հանդերձեալ կեանք, յաւիտենական վարձք կամ պատիժ (sanction) դարաւոր նախապաշարութիւններու ժառանգութիւնը կամ քուրմերու մէկ ստեղծագործութիւնը պիտի ըլլար, զորս Քրիստոսն էութիւնը նուիրագործած է՝ անգէտներու զառանցանքները շահագործելու համար։

Նիւթապաշտ դպրոցի վարդապետութեան համաձայն հոգեկան ամէն երեւոյթ կապուած է գործարաններու և ուղեղի հետ. երբ ուղեղն աւրուի, կ'եղծանին նաև անոր հետ այդ երեւոյթներու բնականոն (normal) արտայայտութիւնները կամ բոլորովին կ'աներեւութանան անոնք։ Լուսնոտութիւն, յիմարութիւն ևայլն, սոյն հիւանդ կամ հաւասարակշռութիւնը կորսնցուցած ուղեղի մէկ հետեւանքն են։ Մէկ խօսքով հոգի կոչուածը առանձին էակութիւն մը չէ (entité), այլ մարդկային գործարանաւորութեանց մէկ արտադրոյթ լոկ։

Ճենովացի Karl Vogt բնագէտին նշանաւոր այն յայտարարութիւնը թէ՛ «ուղեղը այնպէս կը տարրորոյէ խորհուրդը ինչպէս երիկամունքը մէզը», կամ թէ «մարդը ինչպէս կ'արտադրուի բնորոյէն այնպէս ալ խորհուրդը ուղեղէն», խօսքեր՝ զորս կրկնել չվարանեցաւ Պիլանէր, ամենամեծ գայթակղութիւնը յառաջ բերին իմաստասիրական և գիտական աշխարհին մէջ։

Աւելի կամ պակաս չափով այսպէս կը խոստովանի մեր ժամանակի նիւթապաշտութիւնը։ Ան կը կապտէ մեր միմիարութեան պատճառները, կը սպաննէ մարդուն մէջ գաղտնիարական կեանքը, մեր առջեւ կը պարզէ աշխարհայեցողութեան մաշկ հորիզոններ։

Որքան ալ հոգեբանութիւնը մեզի ցոյց տայ թէ՛ մարդը բանական է, ան կը խորհի, մինչ անասունը կը զգայ բայց չի խորհիր։

թէ բանաւոր էակին գիտակցական անդրադարձ երեւոյթները, ընդհանուր գաղափարներու պատկերներէ ունեցած տարբերութիւնը գինքը կը տարորոշեն անասունէն խորապէս բնութեամբ, թէ ան կը կրէ իր մէջ հագի կոչուած առանձին էութիւն մը՝ որ յետ մահու կը վերապրի, այսու հանգերձ արդար յիշատակ համար պէտք է խոստովանիլ թէ ուղեղը հոգիին անդրու վարն է, անոր հետ ամէնախորհրդաւոր եղանակաւ կապուած է. խորհուրդը ուղեղէն կախում ունի, մտածելու կարենոր գործարանն է ան, բայց ոչ բաւարար պոյմանը. ուղեղը խորհուրդ չարտադրեր:

Ջութակաւորը քի ձեռքին պիտի ունենայ իր ջութակը. երբ երաժշտական գործին, անոր լարերն ու ճպտաւ աւրուած չեն՝ գեղեցիկ պիտի երգէ. իսկ եթէ աւրուած ըլլան՝ անախորժ ու աննկարգունակ պիտի հնչէ: Եռաբանութեան պոյմանն է երաժշտական գործին իր մասերովը. երբ ջութակահար մը չգտնուի, սակայն, պիտի ըսենք թէ ջութակը ինքնաբերաբար կը նուագէ:

Գալով Karl Vogt-ի ուղեղի և երկկամունքի արտադրութեան բաղդատական եղերուն, երախայական կը գտնենք զանոնք:

Նիւթը կ'արտադրէ նիւթ, կը հասկնանք. բայց զուտ նիւթը ինչպէս խորհուրդ կ'արտադրէ՝ անըմբռնելի է: Նիւթն ունի իր խորութիւնը, լայնութիւնը, բարձրութիւնն ու կշիռը. խորհուրդին քանակն ու տարածութիւնը ո՞րն է:

Մեր օրերուն մէջ՝ ռուզի սարտամ ու անորոշ պատկեր մըն ալ կը գործածեն. «Տարրալուծական կորովը ջղային կեդրոններէն խուսափած՝ պիտի փոխարկուէր հոգեկան կորովի»:

Ինչ որ կը բարացուցէ նիւթապաշտ փիլիսոփայութիւնը, կ'ըսէ Renouvier, այդ անցքին, այդ փոխանցումին հաւատքն է, և դայն խորհուրդին, մտածումին իբր ծընունդը նկատելու երեւակայութիւնը: Եւ շատ իրաւունքով կը յաւելու թէ՛ նիւթապաշտութիւնը կը սահմանէ խորհուրդն իբր արտադրովը բաղդարութեան մը՝ որուն

տարրերը սակայն խորհուրդը երբեք չեն հնթադրեր ի գօրութեան:

Բնութեան և գիտութեան մէջ տեսնուածին համաձայն, ստույգ է թէ ֆիզիքական ոյժը միայն կրնայ ծնցունել ֆիզիքական ոյժ՝ միեւնոյն ձեւի կամ տարբեր ձեւի մը ներքեւ. բնութեան օրէնքներուն որոշադրած արգիւնքը միայն յառաջ կը բերէ, բայց երբեք չի տար մոլոր գիտակցական ոյժը: Նիւթապաշտ իմաստաւորներն և գիտնականները և ասոնց դպրոցին պատկանողներ երբ նեղուին, իրենց պաշտպանած դրութեանը իբր փաստ միշտ սա պարագան յառաջ կը բերեն: Տիեզերքը խորհուրդներով վարազւորուած է, գաղտնիքներով շրջապատուած կ'ապրինք. նիւթին յատկութիւններէն տակուին մեծ բան չենք հասկնար, գիտութիւնը ամէն օր մեզի նոր և հրաշալի ցուցումներ կ'ընէ, փամանակին հետ կնճիւղ պիտի լուծուի և նիւթապաշտութիւնը պիտի յաղթանակէ:

Անշուշտ ամէն ոք համոզուած է թէ ապագայ անստուգութիւններու և հնթադրութիւններու վրայ հիմնուած ի յառաջագունէ հաստատութիւններ արժէք գուրկին:

Հակառակ քանի մը գիտնականներու սոյն վարկածին և երեւակայութեանը թէ՛ խորհուրդը իրենց մտքին ներկայացած է իբր ելեքարական լոյս մը՝ բխած ուղեղէն, կամ թէ խորհուրդը տեսած պիտի ըլլային իբր շրջմոյլի հուրի մը երբումը ուղեղին վրայ, իրականութեան հետ կ'երեւի շատ մը հոյակապ գիտնականներու և հիւսուածաբաններու (histologiste) համար:

Անգլիացի նշանաւոր հիւսուածաբան մը, օր մը, հիւանալի պերճախօսութեամբ կը պատմէ Օ. Գոնթի թէ՛ ուղեղի վրայ իր կատարած խղճամիտ ուսումնասիրութեանց արգիւնքը, շատ փքուն, կարի անշան էին հասկնալու համար խորհուրդը: Խոշորացոյցով երկարաշունչ և յամառ զննութիւններ փոքրիկ նշան մը անգամ չէին երեւան բերեր թէ՛ մարդուն մէջ ինչպէս տեղի կ'ունենան յուզումներ և վերջնական ներ, կամեցողական և գիտակցական վիճակներ:

Քանի որ նիւթապաշտները կը պնդեն

թէ ամէն ինչ նիւթ է, թող մեզ հաճին ցոյց տալ հոգեկան բոլոր երեւոյթները թանձրացեալ, տեսանելի ձեւով մը՝ դանկին մէջ, կամ գոնէ զայն բացատրեն մեզի: Կ'ըսեն թէ հիւլէական թրթռացումներ տեղի կ'ունենան: Բայց մենք ոչ խոշորուցոյցով կը տեսնենք այդ թրթռացումները, ոչ ալ անոնց գիտակցութիւնը ունինք: Բաց աստի թող բացատրեն թէ ի՞նչ պատրաստութիւնով, ի՞նչպիսի փոխանցումով, քիմիական ի՞նչ տեսակ բաղադրութեամբ հիւլէի շարժումը, որ նիւթական շարժում մըն է, հոգեկան արտայայտութեան կը փոխարկուի. բնութեան մէջ այդպիսի հրաշալի փոփոխութեան մը չենք հանդիպիր:

Յորչափ նիւթապաշտներ չեն յաջողիր անցումի այս նուրբ և ամենափափուկ կէտը լուսաբանել, իրենց ըսածներուն հաւատք պիտի չընծայենք:

Երգեկա.

ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ.

ԵՐԱՆՕԹ. ԽՄԲ. — Երգեկայի բարեջան և հմուտ առաջնորդը, շատ կարեւոր խնդիր մը կը յուզէ իր ներկայ յօդուածով, որ դրուագ մ'է պարզապէս գիտութեան և կրօնի կարծեցեալ հակընդդէմ պայքարին: Մենք խորունկ համոզումն ունինք թէ այդ երկուքն անհաշտ չեն բնաւ, և ընդհակառակն իրար կ'ամբողջացնեն: Այս տոթիւ աւելորդ չենք համարիր ծանուցանել թէ մտադիր ենք յառաջիկայ թիւով իսկ սկսիլ յօդուածներու կարեւոր շարք մը, ժամանակակից միտքերը և մասնաւորապէս հայ երիտասարդութիւնն զբաղեցնող այս էական հարցին վրայ:

Ս. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆԳՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԻ ԶԱՐԴԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Ս. Հայրապետի անդրանիկ կոնդակը պատրաստ էր և կարող էր սեպտեմբերի կէսերին՝ օծումից անմիջապէս յետոյ՝ հրատարակուել. բայց միտք յղուցուեց հին կոնդակների նման զարդարել այն վայելուչ ձեւով և ապա հրատարակել: Ն. Սրբու-

թիւնը այդ գործի իրագործումը յանձնեց նուստախ: Այս նպատակի համար հրաւիրուեցաւ նկարիչ Սիմէոն Նիկոլայիովիչ Պոլտարակցին, ծանօթ վիրաբույժական և հայ արուեստին. բնագիրը ձեռագրական ոճով արտագրելու նեղութիւնը յանձն առաւ մի ուրիշ պարոն՝ ձեմարանի նախկին սան՝ պ. Լեւոն Երամեան: Տպագրութիւնը կատարուած է Պետերբուրգում Գոլիկէ և Վիլբորգ նշանաւոր գործարանում պրոֆ. Մառի՝ խորին շնորհակալութեան արժանի՝ սիրալիր հակողութեամբ և կարգադրութեամբ: Նախատեսուած չէր թէ տպագրութիւնը կարող էր այսքան ուշանալ. մասնագէտ անձանց վկայութեամբ հնարաւոր չէր աւելի կարճ ժամանակի ընթացքում կատարել այն, քան կատարուած է, իսկ մի անգամ սկսած գործը ընդհատել կարելի չէր, որքան և անյարմարութիւններ ծագէին անդրանիկ օրհնութեան կոնդակի հրատարակութեան յապաղմամբ: Այսօր Ս. Հայրապետի և Հոգեւոր Տիրոջ օրհնութեան հետ՝ մաքուր և գեղեցիկ տպագրութեամբ՝ մատուցանուած է հայ ժողովրդին և գեղարուեստական մի գործ, մեր նախնեաց մանրանկարչական արուեստի ոճով և հետեւողականութեամբ:

Ճակատի կեդրոնական պատկերը կազմուած է այսպէս. աջ կողմի (գիտողի) կամարի տակ ամբողջ հասակով կանգնած է Ս. Բարդուղիմէոս, իսկ ձախում Ս. Թադէոս տաքեալը, երկուսն էլ մեր եկեղեցական աւանդութիւնների համաձայն իրենց յատուկ նշանակներով: Թադէոս առաքեալը բռնել է գեղարդը, իսկ Բարդուղիմէոս՝ Տիրամօր պատկերը: Երկուսի մէջն է Դաստառակը Փրկչի անձեռագործ պատկերով, որ դարձեալ մեր աւանդութիւնների համաձայն Տէրն ուղարկել է Արգար Թադաւորին՝ Թադէոս տաքեալի ձեռքով: Ներքեւի խորանի տակ հայրապետական զգեստով կանգնած է Ս. Լուսաւորիչ: Երեքի դէմքերն էլ առնուած են Մայր Աթոռի մատենադարանի արքայական ճաշոցից, N. 892, որ հայ մանրանկարչական արուեստի և պատկերադրութեան մի գլուխ գործոց է: Լուսաւորչի աջ կողմն է Ս.

Մասիս, իսկ ձախ կողմը Ս. Էջմիածինը: Աւելի ներքեւ թեւատարած հրեշտակը բըռնել է հայրապետական նշանները՝ խաչն ու գաւազանն իրենց դրօշակներով, թագն ու կոնքեռը, եմփոփոռնը:

Այս բոլորը իւր զարդարանքներով, ինչպէս և Ս. Հայրապետի անուան և տիտղոսի գրերը, չրջանակները նկարազարդուած են մեր նախնեաց արուեստի հետեողական նութեամբ կամ ճիշդ նմանութեամբ: Պ. Պոլտարացկին աշխատել է գաղափարի համեմատ ցոյց տրուած նիւթերը դասաւորել, շարադրել, միանգամայն հաւատարիմ մնալով հայ արուեստի ոգուն, որով և այս գործը կարող է հայ մանրանկարչական արուեստի մի նմուշ լինել: Մենք այս տեղ կ'աշխատենք մանրամասնութեամբ ցոյց տալ այն տեղերը, որ տեղից առնուած են նիւթերը, որպէս զի ապագայի համար չկորչէ, և կօնդակն ընթերցողի համար էլ պարզ լինի նորա զարդանկարչութիւնը:

Երկու առաքեալների և Լուսաւորչի դէմքերն առնուած են արքայական ճաշոցից՝ N. 892, Բարդուղիմէոս առաքեալինը 10 ա (այնտեղ Յովհաննէս աւետարանչի սնդրին), Թադէոսինը 6 բ (այնտեղ Ս. Սահակ Պարթև ամբողջ հասակով), իսկ Լուսաւորչինը իւր իսկ սնդրից 122 բ: Առաքեալների հագուստը Պ. Պոլտարացկին ինքն է շարադրել, իսկ Լուսաւորչի զգեստը իւր բոլոր մասերով առնուած է Մ. Աթոռի աւանդական զգեստներից: Դաստառակը նկարիչն ինքն է շարադրել, աւանդութեան համաձայն, ինչպէս և առաքեալների Մայր Տաճարի և Մասիս դաշտանկարները, հետեւելով մեր մանրանկարչական արուեստի նման գործերին: Կեդրոնական պատկերի շրջանակի արտաքին կողմից՝ աջ և ձախ, ինչպէս և ճակատի խաչի հիմք կազմող զարդերն առնուած են արքայական ճաշոցից 211 բ. իսկ խաչը Ներսէս Լամբրոնացու համար գրուած և նկարազարդուած Նարեկից N. 1561, 5 բ: Երկու առաքեալների և դաստառակի խորաններն իրարից բաժանող, կարմիր և կապոյտ գծազարդուած տախտակները, ինչպէս և ամբողջ այս մեծ պատկերի հիմք կազմող, ներքին տախտակը, որի վրայ կանգնած են սիրամարգները, առաքեալների և Լուսաւորչի գլխի եռամասնեայ կամարների հետ, առնուած են արքայական ճաշոցից 6 բ, որոնք այն տեղ Ս. Սահակ Պարթևի պատկերի շրջանակի մասերն են և մակերեւոյթի (ֆօնի) մեծ կամարը: Առաքեալների կամարների վերին անկիւնների, քառանկիւնի շրջանակից ներս, ծաղկազարդերը՝ իրար դէմ կանգնած զոյգ թռչուններով՝ առնուած են Լամբրոնացու Նարեկի 5 բ խորանազարդի անկիւններից, իսկ դաստառակի քառանկիւնի խորանի մակերեւոյթ կազմող երկներանգ գծազարդերը եռատերեւներով արքայական ճաշոցի 7 բ սկսուածքի ճակատազարդից: Լուսաւորչի կամարի անկիւնների եռատերեւներն ու հընգատերեւները՝ իրենց ցողուններից կազմուած հանգուցաւոր շրջանակներով՝ առնուած են Լամբրոնացու Նարեկից, հաւանօրէն 117 բ. այստեղ փոքր ինչ փոխուած է, նոյնը չկար այնտեղ, թէև ամբողջ արուեստն ու ոճը Նարեկի նկարչինն է: Ներքեւի չորս սիւնները, որոնց մէջ զետեղուած են Մասիս, Լուսաւորչի և Ս. Էջմիածնի պատկերները, իրենց խարիսխներով առնուած են Լամբրոնացու Նարեկի 5 բ, 6 ա խորաններից, իսկ խոյակները՝ չորս աւետարանիչների նշանակներով՝ Յովհաննէս Երզնկացի բազմաշխատ վարդապետի գրած և Թորոսի նկարազարդած Եսայի Նչեցու Աստուածաշնչից N. 182, 438 ա, 439 բ, 440 ա և 442 ա. այստեղից են առնուած և սիրամարգները 438 ա: Եսայի Նչեցու Աստուածաշնչի մէջ թառած է միայն մի սիրամարգ, աջ կողմից, բայց Պ. Պոլտարացկին համաչափութիւն պահելու համար աւելացրել է և միւս կողմի սիրամարգը. բացի դորանից սիրամարգի պարանոցի ծաղկազարդը երկներանգ է դարձրել և աւելի ակնահաճոյ, այն ինչ այնտեղ միագոյն է ու կարմիր:

Հայրապետական նշանները, խաչն ու գաւազանը իրենց դրօշակներով, թագն ու կոնքեռը, եմփոփոռնը նկարուած են բնականից, այսինքն Մ. Աթոռի աւանդատան զգեստներից, իսկ թեւատարած հրեշտակը արքայական ճաշոցից 208 ա.

Այս վերին մասի արտաքին շրջանակը,

ծայրերի չորս ծաղկազարդերով առնուած է արքայական Ճաշոցից. բուն շրջանակը 6 բ, Սահակ Պարթևի շրջանակի մասերը, աջ կողմի ներքին ծայրի ծաղկազարդը 422 բ, քիչ փոխուած, վերին ծաղկազարդը 395 բ, ձախ կողմի ներքին ծաղկազարդը 855 ա, վերինը 431 բ, քիչ փոխած: Բնագրի շրջանակը աջ և ձախ կողմից առնուած է դարձեալ նոյն Ճաշոցից 58 բ, վերին ծայրազարդերը 425 ա, Բնագրի շրջանակի ներքին կողմ դարձեալ արքայական Ճաշոցի 194 բ սկզբնազարդից, սափորը 7 ա. բացի միջի ծայրիկներից, որ նմանողութիւն է, երկու կողքի ոլորուած ծաղկազարդերը թաշուններով 6 բ, հետեւեալ միւս զոյգը 159 ա:

Հայրապետի անուան և տիտղոսի առաջին սուրբ, երկրորդի «կթզկա» և չորրորդի «էջմիածնի» բառերը գրուած են արքայական Ճաշոցի ոճով, բայց աւելի պարզած և փոքրացրած. աւելորդ ենք համարում ամէն մի տառի տեղը ցոյց տալ, քանի որ այստեղ միայն ընդհանուր նմանութիւնն է պահուած: Հայրապետի անուան առաջին տառը միայն կազմուած չորս աւետարանիչների նշանակներից, առնուած է Յսայի Նըչեցու Աստուածաշնչի Մարկոսի սկզբնաւորութեան առաջին Ս տառից 463 ա, բայց Մ-ի բնորոշ մասը՝ բաղուկը ձեռքին խաչ՝ Լամբրոնացու Նարեկի 2 տառից, 8 ա:

Տպագրուած կոնդակը մեծութեան կողմից բնագրի 2/3 ն է. այդ պատճառով էլ մի երկու փոքրիկ մանրամասնութիւններ լաւ չեն դուրս եկել, որ առանց նկատողութեան ենք թողնում: Ընդհանուր առմամբ տպագրութիւնը ոչ միայն դժնայուցիչ է, այլ և չափ լաւ: Կոնդակի իսկականը, նկարազարդած Պ. Պոլտարացկու և գրած Պ. Երամեանի ձեռքով, կը պահուին հայրապետական դիւանում:

Այսպիսով տեսնում ենք, որ Ս. Հայրապետի անդրանիկ կոնդակի մանրանկարչութիւնն ու զարդարանքներն առնուած են կամ հետեւողականութիւն են մեր նախնեաց մանրանկարչական արուեստի ամենածաղկած շրջանի: Լամբրոնացու Նարեկը գրուած է 1176 (ՈԻԵ) թուին, գրիչն (երե-

ւի և նկարիչը) է Գրիգոր, սքանչելի մանր երկաթագրով և քնքոյշ, ակնապարար ու հանգստացուցիչ մանրանկարչութեամբ: Արքայական Ճաշոցը գրուած է 1286 (ՉԼԵ) թ հրամանաւ «ածասէր և ամենիմաստ բարեպաշտ և հանճարեղ պարոնին Հեթմոյ սրբոյ քսապսակ սբ արքային Լեւոնի» պատկերագրութեան, ճոխ զարդարանքների, երկներանդ և բազմամտեսակ գրերի և առհասարակ մանրանկարչական արուեստի բոլոր ձևերի կատարելութեան մի հարուստ շտեմարան, գարնան նման գուարթ և պայծառ հոգւով, հզօր, համարձակ, բազմազան կողմանի, իւր ուժերին գիտակից տալանադաւոր մի նկարչի գործ: Երրորդը գրուած է 1318 (ՉԿԷ) թ., որ թէև արուեստի կատարելութեան կողմից առաջին երկուսին համեմել չէ կարող, բայց նշանաւոր է հայ արուեստի պատմութեան համար իւր մանրանկարչական նիւթերի պէսապիտութեամբ և ընդու յատկութիւններով: Սորա գեղագիր գրիչն է Յովհաննէս Երզնկացին, մեր մասնագրական պատմութեան թանկագին անձնաւորութիւններից մէկը, իսկ նկարիչը Թորոս, երկուսն էլ Յսայի Նչեցու աշակերտներ, որ գրել և զարդարել են այս ձեռագիրը իրենց մեծ ուսուցիչի համար:

Թող ուրեմն Ս. Հայրապետի այս կոնդակը նորա օրհնութեան հետ հայ Ժողովրդի մի գաղափար տայ մեր նորինաց նուրբ ճաշակի և արուեստի գեղեցկութեան մասին:

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՅՈՎՍԵՓԵԱՆ

Ս. էջմիածին.

ՅԱՌԱՋԻԿԱՅ ԹԻԻՌՈՎ

Տաճարի յառաջիկայ Մայիս 15ի թիւին մէջ պիտի երեւան՝ Խարբերդի պատուական Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ Ծ. Վ. Ասլանեանէ գեղեցիկ յօդուած մը՝ Հայոց Չասիկը, Մայր Աթոռի գործերուն վրայ շահեկան տեսութիւն մը՝ Արշակ էֆ. Ալպոյաճեանէ, մոռցուած հոյակապ էջ մը Գրիգոր Օսեանէ, ևն. ևն.:

ՄՈՌՑՈՒԱԾ ԷԶԵՐ

Տօնական օրերու առթիւ ի դէպ կուգայ վերջու-
շիւ հոյակապ էջ մը եղիւ Տէմիրճիպաշուանէն,
անբացատրելի, առեղծուածային զրոգէտէն,
որ գրականութեան ամէն ճիւղերուն մէջ նետ-
ուած, բանաստեղծ մը, իմաստասէր մը, վի-
պող մը, ընկերաբան մըն էր միանգամայն,
սննհնարով մերթ սկեպտիկի սառուցիչ հոգ
մը իր գրութիւններուն մէջ, եւ մերթ ջերմ
հաւատացեալի տաք շունչը, որով գիտէր
ոգեւորել իր ունկնդիրներն եւ իր ընկեր-
ցողներն հաւասարապէս: Գերազանցօրէն ուստ-
ուածապաշտ հոգիի մը մտքի ծնունդն է իր
«Մեղայ», Տէ՛ր, զոր կը փութանք ներկա-
յացնել ընթերցողներուն: Անէութեան, նիր-
վանային երկրպագուն՝ համոզուած քրիստոնե-
այ մ'է այստեղ:—

ՄԵՂԱՅ ՏԷՐ

Տէ՛ր, մեղայ քեզ: Եւ անո՛ր համար
ինձ ուղղուած բոլոր այն նախատինքներն,
անո՛ր համար ինձի տրուած չարչարանք-
ները, որոնք առողջութիւնս խանգարեցին,
անոր համար մեծերուն արհամարհանքն
ու փոքրերուն ծանականքը, անոր համար
թափառական կեանքս օթեւանէ օթեւան,
ոստանէ ոստան: Անոր համար այս ամէնը,
քանզի քեզի դէմ մեղանշեցի ես, Տէր,
մեղայ:

Փիլիսոփայական բառարանիս մէջ մե-
ղանշեցի քեզի դէմ, Տէր: Տէրունական
աղօթքին վրայ ի՞նչ թեթեւութեամբ խօ-
սեցայ: Վոյթէ ուր ինձի տունն տուած էր:
Ինչո՞ւ Ռուսոյէն մանաւանդ չներգործուէի,
Ռուսոյէն որ խանդավառ հաւատացելոյ
ջերմութեանը թեւումը ու գեղեցկադաւան
իմաստասէրի սքանչեղմամբ կ'աղաղակէր.
«Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի ա-
նունք քո»: Փիլիսոփայական Բառարանիս
մէջ վայրենեաց սմանց հոգւոյն մէջ կրօնա-
կան զգացման բացակայութիւնէն տիեզերա-
կան անհաւատութիւն կ'եղբորակացնէի, մե-
ղայ, Տէր:

Գննո՛ղ գաղտնեաց, քեզի միայն չէ՞
վերապահուած կարգալ հոգիներուն երի-
կոմունքներուն խորը: Իմաստասէրներո՞ւն,
մանաւանդ ինձ նման իմաստակի՞ մըն է
տրուած գիտնալ թէ վայրենին կամ քա-
ղաքակրթեալ մարդն ի՞նչ կը զգայ, ի՞նչ կը
խոկայ հոգւոյն մէջ. ամէն բան կ'արտա-
յայտուի միթէ:

Փիլիսոփայական Բառարանիս մէջ դարձ-
եալ քեզի դէմ մեղանշեցի, Տէ՛ր, գրելով
«Միայն Աստուած Լիզուէէն աւելի բան
գիտէ»: Ո՞վ է մահկանացուն, ո՞րն է մահ-
կանացուն, որուն անունը ներկի ըլլայ
նոյն պարբերութեան մէջ յիշատակել քու-
կին ահեղ անուանդ հետ, ամենակալ, ամե-
նիմաստ:

Նոյն իսկ մարդկային միտքն իր բիւ-
րամեայ՝ թերեւս բիրիցս բերամեայ զար-
գացումին լրութեան մէջ ալ ի՞նչ է տակուին
գերագոյն խնայականութեան քով, որով
երկնած, երկինքն և երկիր անջրպետած ես,
Արարիչ Աստուած: Այն մեծ գիտութեան,
որ առաւուրն փոքր տգիտութիւնն մ'է
անհաստեղի գիտութեանդ քով, Ամենա-
կալ, այդ անձուկ գիտութեան տունն
տուած հանրացումներուն մոլորութեանց՝
ներեցիր անտարակոյս, բազումողորմ Տէր:
Հեծուեալէս համբակիս, իմաստակիս ալ
թողութիւն չնորհէ՛, գթած ողորմած Աս-
տուած:

Բառէջօրն իր բնաստարական բաղա-
դրութեանց անվախճան շուքին ետեւէն և
զիս իմ տարաբաղդութեանցս վերելական
սանդուխին վրայէն անսպաս գթութեամբդ
արտիճանաբար հանեցիր՝ բարձրացուցիր՝
հասուցիր չքեղաշուք Անդրազունին. ուր
լուսազեղեցիկ Գերովբէք նոյնքան քաղցրու-
թեամբ կը ժպտին ինձի որքան դաժանու-
թեամբ քննարկեցին պատուիրանացդ ան-
սաստող նախամարդոյն: Ծունկերս վարդ
ամպերուն վրայ, թեւերս կապուտակ ե-

թերին մէջ, աշխուշ սափիւղայ դուռնէն ներս, հոգիս ողորում աստուածային ճշմարտութեան անճառ լուսայորդութիւններով, սիրտս երկնաւորաց բարասումներուն մակընթացութեամբն ուռուցիկ, ուրնգունքս խնկածիւղ, չրթունքս երգասաց, կ'օրհնեմ զքեզ, Տէր իմ, որ սառապանաց սուրբ գիրքը ինծի բացիր, որ տառապանաց երկնայանգ ուղին ինծի ցուցուցիր: Մարգարէներուն ալ գիրքը նոյն եղաւ, մարտիրոսներուն ալ նոյնը, առաքեալներուն ալ վարձքը նոյն: Մարգարէք, մարտիրոսք և առաքեալք նոյն կենօք, նոյն սառապանօք արժանացան նոյն լուսեղէն սրովահիւսակ պսակին:

Վէպի մը մէջ, Տէր իմ, անարժանաբար այդ տառապանաց կրօնքը քարոզեցի, վէպ, զոր անուանեցի Աստուածորդւոյն վսեմ պատուիրանին բառովը.—Սէրն իննեւասներորդ դարուն մէջ: Այդ գրքայկա հաճոյ թուեցաւ քեզ և ընդունելի, Տէր... զի այնուհետեւ աւելի մօտէն ճանչցուցիր ինծի տառապանքն իւր ամէնէն թանձրացեալ ձևերովը: Ամէնուրեք, Տէր, դէմս մէկը հանեցիր որ երգիծական խօսքով մը, որ հայհոյանքով մը, որ խարաղանի հարուածով մը, զրպարտութիւնով հարուածեց ու խոցեց սիրտս:

Փա՛ւք քեզ, Տէ՛ր,

Այս ամէն հարուածները, այս ամէն պատուհաններն անո՛ր համար քանգի երիտասարդութեանս վրայ գոռոզացայ, երեւակայութեանս վրայ հպարտացայ, ևս ինքս էի հեղինակն առ Յիսուս այն յիմար, այն անպարիշտ բանաստեղծութեանց չարասուէիդ շարքին:

Ես ինքս էի որ կը հեզնէի մոգերէն ու մարդկութենէն երկրպագեալը, աւազակները տաճարին չրջափակէն դուրս վռնողը, Ղազարոսը յարուցանողը, մարդկան մեղքերուն քառութեանը համար լանձիւղ հող, խաչը բարձով՝ խաչը հէնտը, մուռեալները յարուցանողը ու մեռելներէն յարուցեալը:

Հրէաստանի բոլոր իմացապանձ վարդապետներն ըմբերանողին վրայ ևս էի սոնքացողը, դարերուն տիրողին ու գիտու-

թեանց ու լեզուաց բաշխողին վրայ, մահացեալ մարդկութիւնը յարուցանողին և մեռելոց յարուցելոյն, Տեառն մերոյ փրկչին Յիսուսի Բրիտանի վրայ:

Կը յիշեմ, այո՛... ու կը յիշեցնեմ ձեզի բոլոր, որ իմ ամբարշտութիւններս կարդացիք ու խցիք, կը յիշեցնեմ ձեզի որ ինծի համար ներողամտութեամբ թուութեամբ վարուեցաք: Բիւր ձեռք, բիւր ցուպք, բիւր խարաղանք թող վեր վերնան ու թող վար իջնան գլխուս վերայ, որ ուրացաւ, սրախ վրայ՝ որ երկրայեցաւ, հոգւոյս վրայ՝ որ երկրիս տիղմը նախընտրեց երկնից ճառագայթէն: Զարկէք մինչեւ որ սրիւն թաթաւ մարմնոյս կարմրութենէն շառագնին ծով ու երկին, զարկէ՛ք մինչեւ որ ճգմուռի գլուխս և իր մասնիկներն երթան այլտար հաց անդունդներն լեյնեն ու խցեն. զարկէք մինչեւ որ յոգնիք, մինչեւ որ հաւատքն ու յոյսն անդառնայի կերպով յաջորդեն մտացս ու հոգւոյս թերեհաւատութեան ու յուսահատութեան: Իսկ սէ՛րը Սէ՛րը. անիկա չթողուց երբէք սիրտս: Եւ Աստուած իմ մեղանչումիս չպիտի ներէր, ես ձեր անխնայ դանակոծութենէն և իմ մեղքերէն չպիտի յառնէի, եթէ չսիրէի:

ԵՂԻԱ ՏԷՍԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԳԵՐԵՋՄԱՆԷՆ ԶԱՅՆ ՄԸ

Վեհափառ Տ. Տ. Մատթէոս սրբազնագոյն Կաթողիկոսի անդրանիկ կոնդակին ընթերցումն եւ հրատարակութիւնը՝ այժմէութիւն կուտայ ճշմարտապէս «Մոռցուած» էջի մը, Պետրոս Դուրեանի՝ վաղամեռիկ քայց անմահ բանաստեղծին զրաբար մէկ նամակին,—հազուադէպ բան մը ողբացեալ պուէտին համար որ աշխարհաբար զրաժ է միշտ,—զոր ուղլած է Ն. Ս. Օժուժեան, վարդապետական ձեռնադրութիւնն ստանալուն առթիւ: Իր գուշակութիւնը՝ Տ. Մատթէոս Վ. Իզմիրլեանի հարապետական աթոռը բարձրանալուն նկատմամբ, իրականացած է այսօր. աւա՛ղ որ ինքը կաշուիւն հեռացած է մեզմէ, «յաղերեկ ալիս» հասնելէն շատ առաջ.—

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Ա.Ռ.

Տ. ՄԱՏԹԵՆՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

Շնորհալից Հայր.

Սիրտ իմ թրթռայր ընդ առաջին տեսողութիւն Ձեր, և ճաշակէր զսիրաբուն բարեկամութեան գնախախտայրիս, միանգամայն զարմանայի ընդ ուսումնական և կրօնական բարեմասնութիւնս, վերնձիւղեալս ի ձեզ:

Յօրէ անտի յօղեցաւ սիրտ իմ յաւերթ ընդ Ձեզ ի հանգոյցս սիրոյ. այլ բաղդն որերիմ՝ վազ վազ արտասահման հալածեաց զիս յախառն հեռուորս(*), և ետ ինձ երազել և եթ ի կոհակս փողփողուն արտասուաց, և ոչ ևս ետ ինձ թոյլ զգէմս ձեր սիրական նշմարել միւս անգամ, այլ ի հովիկս տերեւաշարժս միայն զհագագ Ձեր լսել:

Արդ վերնձայեմ վէտ ի վէտ զբոյրս արտիս, առ ի ինդրել յերկնից մնալ հաստատուն ի սուրբ աստիճանիդ. Բրիտանացւանդ վարդապետութեան, առ որ անձնայորդոր ըզձայիք հասանիլ:

Այլ աղեխարշ սիրտ իմ տոչորեցաւ, զի ոչ լուայ յառաջագոյն զկատարումն ձեռնադրութեան յաւերն գերեւրձանիկ, յորում լցան իղձք Ձեր և բաղմաց իսկ, որ հիացմամբ զարմանային ընդ կրօնավայել բարոյս Ձեր:

Ո՛վ զժբաղդութեան, չեղէ արժանի յատուածապայծառ սեղանի տեսանիլ զՁեզ՝ վառ ի սէր Բրիտանոսի մերոյ խաչելոյ, և լսել զուխտ Ձեր վասն հուրիւրոյ Ազգիս զխաչ Ձեր և զարիւն անպարտ:

Եւ արդ, ի լուր դատախոսութեան աստիճանի Սրբութեան Ձերոյ, եկի ի խընդակցութիւն և ի սիրելի տեսութիւն միւս անգամ, առ որ տենչայի անդատին ի հասակիդ տեսութենէ անտի մերմէ. այլ իբրեւ լուայ յեղակարծ զբացակայութիւն Ձեր, անդէն եղի ի մտի սլառ գրով մաղթել յերկնից վասն Ձեր, աւուրս բողոքման ի պաշտամունս աստուածային, պահել

(*) Այսինքն Սկիւտար եւ Կէտիկ-Բաշա, զի Դուրեան Պոլսէն դուրս ելած չէ:

զՁեզ սուրբ, անյողդողդ և քաջարթուն, վեհաշուք վառել զՁեզ յեկեղեցւոյ կամար լուսերանդ՝ զերթ Արուսեակ՝ ընդ հոյն ասանդաց, փողփողել: ո՛չ ի խաւարի, այլ հուպ ի լուսափայլ նշոյլս արփեսին, և հակիրճ տակ՝ պահել պահպանել յաւերթ զՍրբութիւն Ձեր յայս սարադաս բարեկամութեան, որով միտիմարիմ յաշխարհի հարուածս:

Հրճուեցայց յաւերթ, յորժամ տեսից զՁեզ, մինչեւ իմ հասեալ յաղեքեկ յողիս, յԱթոռ Հայրապետական և զՀովուապետի Գաւազան ի ձեռին:

Մնամ միշտ անկեղծ և խոնարհ
1869 Սեպտ. 17 Բարեկամ Ձեր
Օրնագիւղ Պ. ԴՈՒՐԵԱՆ

Ա.Ի.Ա.Գ. ՈՒՐԲԱԹ

Սիրուած, ալեւոր բանաստեղծ մը, Մկրտիչ Աճէմեան, իր գլխաւոր քերթուածները գեղեցիկ հատորի մը մէջ ամփոփած էր վերջերս: Այդ քերթուածներու ընթերցումը մելանոյշ տրիւրութեամբ մը կը համակէ մասնաւորապէս անոնք՝ ինչպէս այս տողերը գրողը՝ որ իրենց երիտասարդութեան օրերուն այդ փափուկ բանաստեղծութիւններով օրօրուած էին: Հասոյրով կ'արտաստայենք նոյն հատորէն սրտայոյզ քերթուած մը, «Աւագ Ուրբաթ», որ կրօնական խորունկ խորհուրդին հետ մէկտեղ, սրտայոյզ է մասնաւորապէս այն պատճառով որ Հայու այժմիւ արիւնոտած կեանքին տըխուր պատկերը կը պարզուի խաչուած Յիսուսին ոտքերուն տակ:—

Ա.

Գանուած պրկուած իր խաչին վրայ,
Սուր սուր փուշերով գլուխն արիւնջրայ,
Ու կիզից վերնով կողը պասառուն
Առկէ չարչարանք՝ կակիծներ անհուն,
Գաշարունն աղեսաց, պապակից ծաւաւ,
Յիսուս անհրճուն կրեց ու շացաւ:
Բայց երբոր հոգին մարմնէն կը փաշտէր,
«Հայր, աղաղակեց, ընդհէր զիս քողեր.»
Ու յանկարծ արեւն զգեցաւ խաւար,
Կայծակն որոնաց անեղ ու երկար,
Եւ երկիրս հիւսկէն սարսեցաւ ուժգին

Ձի Աստուծորդին աւանդէր հոգին:
Մինչ աշակերտներն ահաբեկ փախան,
Դքսաւր կանայք իւր եւ բաշխան
Բերին, օծեցին Յիսուսի մարմին
Եւ անկողնեցին զայն ի գոգ շիրմին:
Բայց շիրմին խորէն նոր լոյս՝ նոր հաւաս
Օրհնէմէր սիրոյ բոխեցին առաս,
Ու երկրիս վրայ սուրբ խաղաղութեան
Շունչը ախոնեցաւ յունքի՝ անսահման:

Բ.

Ո՛վ Աստուծորդիդ գրած՝ մարդասեր,
Դուն որուն ճակատս խոցեցին փուշեր,
Դերեզմանիդ շուրջ խուճախ խուճախ ջերմեռանդ
Երկիրս զանեմէն սուրբ խաղաղութեանդ:
Բայց շատեր նկուն կեանքին լուծին զայն,
Իրենց սիրեն աչ սուր փուշերով ծակ ծակ,
Արցունքն աղօթքին խաչունին, ահա ժես,
Անոնք աչ գաղտնի խառնեմէն քեզի պէս:
Տե՛ս աչ մանուկներ շէտաչ որ ճըւան,
Ծերեր, այրիներ փախաւոր մահուան
Որ գաղարուշով անողոք քաղցէն
Ահա քեզի պէս անհրճուն հեծեմէն:
Իսկ աչ մարդասեր՝ մոլեռանդ յաճախ,
Որ ջրապատէն մեր նախնի փարսխ,
Տե՛ս պատառ մը չոր հացի փոխարէն
Անքիծ հոգիներ կը բունաւորեն:
Ո՛հ, շատեր միկնել խորն իրենց հոգուն
Սուգ մը կրեն սեւ, վիշտ մ'ունեն քաղուն:
Տես, մահաւերձին մայրը խեղաշէն
Քեզի կարկառե իր ձեռքերն անմեղ,
Խաչիդ բախելով իր ծոցուն ճակատ
«Ընդէր բողբոջի» զոյ՛հ յուսահատ:
Հողեղէն մարդուն հաւասքը սխաւ
Երբեմն հրաւիրէ ին վրեժի արդար:
Դուն ներողութիս Աստուծոյ բարի,
Ողորմե՛ք անոր որ խաչիդ փարի:
Իր պաղատանքին շէ՛ք ու գրաւ:
Հեռացաւ իրենէն սուգն ու Դողգորս:
Մի շխմէր զայն որ ի քեզ յուսայ:
Տո՛ւր հեքին հացիկն հաւապագործայ
Օրհնէ՛ր շառս աւօրն ու աղիկն,
Յորենը դաշին, ծիլ ծաղիկ մարգին
Ու առաքելոց գերեզմաններէն
Հաւասքը լուսոյ բոխեցաւ նորէն...

1899

ՄԿՐՏԻՉ ԱՃԷՄԵԱՆ

Զ Ա Տ Ե Վ

Իր կրօնական բանաստեղծութիւններով ծանօթ
դէմք մը՝ Տիար Դրիգոր Զ. Գալուստեան՝ այս
օրերս հրապարակ հանեց, «Սրբազան ներշնչե-
լու՛մներ», Հայ. Եկեղեցւոյ տօնական օրե-
րուն պատշաճեցուած քերթուածներ, զորս
հատորին սկիզբը տպուած օրհնածիր զրու-
թեամբ մը պատուած է Դուրեան Ամեն. Ս.
Պատրիարք Հայրը: Այժմէական է իր «Ձա-
տիկ»ը, գեղեցիկ քերթուած մը, զոր կը փու-
թանք հրատարակիլ, ընթերցողներուն գաղա-
փար մը տուած ըլլալու համար երիտասարդ
բանաստեղծին քերթելու կերպին վրայ:—

«ՁԷ ԱՍՏ»

Դուք, իշխարքեք, ինչո՞ւ ցողովը աչգուն՝
Արսաւաւարում ու կարմրած աչքերով,
Տենդոս քայլով հոս կը փութաք վաղապէս,
Վրդովելու շիրմին նիւթը անխորով:
Այն որ մահուան լուծեց կապերն ահաւոր,
Պիտի մընա՞ր շիրմին մէջը շրջապատած,
Ի՞նչ հարկ օծել զԱյն, որ ձեռքովն իր հրգօր՝
Կեանքով օծեց շիրմին սեւը մըքսմած:
Ձե՛ք, փառաց Տերն գերեզմանին անբախտ
Բակեց, փրշեց փախանքները, նիզն ու դուռ:
«Ձե՛ք Աստ»:

Դուք, աշակերտք Վարդապետն երկնաւոր,
Ինչո՞ւ աչքալիս բողբոջովն յուսահատ
Կը քառապիք վրդովմունքով մ'անստիւր:
Դուք որ Անկի կ'ունանեքիք անընդհատ,
Ձե՛ք յիշէր Իր խըրախոյսի աչն խօսքեր՝
Մինչ կ'ըսէր քե պիտի եր Իրեն խաչ եղնը,
Մոռցա՞ք քե ինք առաջուց կը գուշակէր
Թե պիտի մըքներ գերեզմանին մէջ անել:
Բայց չե՛ք, Ինքը յաւիտենից Անմահն էր,
Ձի կրցան զԱյն բանեց շիրմին սեւ դուռներ:
«Ձե՛ք Աստ»:

Դուք, Բրիստոնեայք, հերի՛ք խաչին երգեցիք
Երբը շրջաւոր ու արայոյց, ներդաշնակ:
Հերի՛ք Փրկչին չարարանքին հիացիկ՝
Հերի՛ք Անոր քաղաքները մեղմունք:
Իր փրկչական դերը աշխարհ չէր միայն,
Ո՛չ աչ խաչին ցաւերը տակ իր քաժին:
Թեւեւ եկաւ բառնալ մեղքը մարդկութեան

— Զի այդպէսով խոցուած սիրտեր կը բռնուին —
Բայց Յարութիւնն փառաց պըսակն եր Անոր,
Որով ֆակեց կնի՛ք շիրմին ահաւոր.

«Զե՛ Աս»:

Դուք, ո՛ր մարդիկ, մոռցե՛ք այնչա Գողգոթան,
Ու Յովսէփայ պարեգն եկե՛ք ցնծութեանք.
Մահուան բոլոր արհաւիրքը ցրուեցան,
Անմահութեան այսօր ծագեց այգն անաւայ.
Զի երեկուան հաշեալն այսօր յայրախան
Կը դրդողէ ամուր դուռներն դժոխիսին,
Յաւիտեանից դուռներն ա՛յսօր կը վերանան,
Թագաւորին փառաց տեղի տան մոռսին.
«Այսօր յարեաւ» անմահ Փեսան երկնաւոր,
Լուսո՛յ որդիք, երգեցե՛ք դուք զայս երգ նոր.

«Զե՛ Աս»:

ԳԲ. Լ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ՇԱՐԱԿԱՆԻ ԽԱՋԵՐՈՒ

ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Պատուական Խմբագրապետ.

Բարի եղէք և երկտողիս մի անկիւն
Հնորէք «Տաճար» կիսամսեայ հանդիսում:

Անցեալ ԺԺ. դարու երկրորդ կէտին,
մասնաւորապէս Կ. Պոլսոյ Հայ մամուլը հը-
րատարակում էր՝ հայ եկեղեցական երա-
ժշտութեան մասին՝ մի շարք ուսումնասի-
րական, քննադատական և մանաւանդ վի-
ճաքանական յօդուածներ: Ներկայ 1910,
31 Յունւար. թիւ 6 «Տաճարի» միջոցա-
րարեկրօն Տ. Արքայապետ քահանայ էպէսոսն
առաջարկում է, որ ես հրապարակ հանեմ
իմ տեսութիւնները՝ շարականի խաղերի
մասին:

Իրաւ է, ես գտել իմ հայ խաղերի բա-
նային, և նոյն իսկ կարգում եմ պարզ գըր-
ուածքները, բայց դեռ վերջակէտին չեմ
հասել. զի իւրաքանչեւ խաղի խորհրդա-
ւոր խնամքին թափանցելու համար, նոյն
իսկ տաճարակ ձեռագիրներ պրօպագանդ,
երբեմն ամփոփել են սահում. իսկ ձեռքիս
տաճար եղած խաղերը, այն էլ անուշ ունե-
ցողները 198 հատ են առ այժմ, մի կողմ
թողնելով դեռ անանուն խաղերը, որոնք
խիստ շատ են:

Այսպիսի, զուտ մասնագիտական, խըն-
դիրների մասին անհնարին է գրել մեր
պարբերական մամուլի էջերում այս պատ-
ճառներով. նախ՝ որ պարբերական մամու-
լի էջերը շատ սուղ են. երկրորդ՝ զուտ
գիտական, աւարինքը շարունակուող ու-
սումնասիրութիւններով հասարակութիւնն
զբաղեցնելն անպատասխան է. երրորդ՝ խո-
չոր ու մեծաքանակ ծախս է պահանջում.
և չորրորդ՝ ուսումնասիրութեանս վերջակէտ
չեմ գրել:

Առ այժմ, երկու խօսքով ամփոփեմ,
թէ ի՞նչ տարրեր ունի հայ խաղարանու-
թիւնը. —

Ա. Չայնոստիճանի խաղեր.

Բ. Չայներանդի խաղեր.

Գ. Չարգախաղեր.

Դ. Չայնուճի խաղեր.

Ե. Ամանակի խաղեր.

Զ. Բանալի խաղեր.

Է. Առագանութեան խաղեր.

Ը. Կէտադրութեան խաղեր.

Թ. Ոճական խաղեր.

Ժ. Կապուղ և զատող խաղեր.

ԺԱ. Կիւանիշ խաղեր, և այլն:

Մի այսպիսի ուսումնասիրութիւն կու-
տարելութեան հասցնելու համար պէտք է
ներհուն լինիլ արեւապէս սա հիմնական
ուսմունքներին ու գիտութիւններին. — Տա-
ռաչափութեան, վանկաչափութեան, բու-
ռաչափութեան, տողաչափութեան, ա-
ռողանութեան, շեշտադրութեան, կէտա-
դրութեան, խաղաչափութեան, խաղադի-
տութեան, լեզուին (քառերի իսկական և
հին տաճան), խնամատիրութեան (երկրա-
չափութեան, թուաքանութեան, աստղո-
բաշխութեան և երաժշտութեան՝ հին տա-
ճար), խաղերի ծագման, զարգացման,
անկման և արդի պատմութեան, համեմա-
տական խաղաքանութեան և այլն, և ապա
կարելի է՝ զազտելն երեւոյն հանել: Թող
հայ հասարակութիւնը ներող, մանաւանդ
համբերող լինի՝ մինչեւ որ հնարաւոր չու-
րով, կատարելապէս վերջացնեմ իմ տաճան
և վեց ամսակից առելի տեւող տաճարա-
գին ուսումնասիրութիւններս: Յոյս ունիմ
թէ մօտիկ ապագայում, ուսմունքին հատուկե-
րով, հասարակութեան սեփականութիւն
պիտի դառնայ:

1910 Մարտ 15, Ս. Էջմիածին ԱՂՅԱԿԻՅ

ԿՈՄԻՏԱՍ ԱՐԳ.

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ի Ն Հ Ա Յ Ձ Ա Յ Ն Ա Գ Ր ՈՒ Թ Ե Ա Ն

(Շարունակութիւն 9րդ թիւին)

Բարեբախտաբար այն միջոցներուն Պէզ-
ճեան Յարութիւն ամիրայի սնօրինութեամբ
Մայր եկեղեցւոյ երաժիշտ դասատու կար-
դուեցաւ Պապա Համբարձում Լիմօնճեան,
(տե՛ս Ա. գլուխ.) որ ատեն այլեւս հարկ
չեղաւ այս տղայոց՝ շարունակել փաշ-
թիքան. ուստի երեքը միասին Հայկական
ճայնագրութիւնը կանոնաւորաբար սկսան
դաս առնել Լիմօնճեանէ, ու նոյնութեամբ
երգել եկեղեցւոյ մէջ իրենց ճայնագրած
եղանակին համեմատ:

Մեր տղայութեան ատեն շատ ան-
գամներ լսած ենք ժամանակակից ծերունի-
ներէն, որ երբ այս երեք պատանիները
Մայր եկեղեցւոյ մէջ միաբերան կ'երգէին
իրենց հրեշտակային ձայնով, ներկայ բազ-
մութեան մեծագոյն մասը յարտասուէս կը
փղձկէր՝ անոնց ներդաշնակ եղանակներէն
ազդուելով, մանաւանդ Արիսողոմը, որ յա-
տուկ առողջանութիւն մ'ունենայնուն հա-
մար՝ օրուան ծաշու Գիրքը միշտ իրեն կար-
դացնել կուտան եղեր:

Ճէզայիրեան Մկրտիչ ամիրա՝ որ մաս-
նաւոր գուրգուրանք մ'ունէր այս վերջնոյն
նկատմամբ և պաշտպան հանդիսացած էր
անոր, ուղեց Սասգիւղ փոխադրել զայն՝
ուր բնակութիւն հաստատած էր. այս մը-
տադրութեամբ կը դիմէ օր մը Պատրիար-
քարան, և Սղաւնի Ստեփան Պատրիարքի
միջոցաւ կանչել տալով Իւթիւճի Սաշա-
տուրը, կ'առաջարկէ անոր՝ հանդերձ ընտան-
եօք փոխադրուիլ Սասգիւղ, որպէս զի Ս.
Ստեփաննոս եկեղեցւոյն երաժիշտ կարգէ
իր Արիսողոմ որդին: Ուրախացաւ Սաշա-
տուր՝ որ իր զաւկին արժանիքը գնահա-
տուած էր այսպիսի բարձր անձնաւորութիւնէ
մը և գնաց աւետիս տալու. ի սկիզբն
գեթկամակեցաւ Արիսողոմ, առարկելով որ
տակաւին պէտք ունի աշակերտելու Դըս-
րոցին՝ կատարեալ կերպով սովորած ըլլալու

համար Հայկական ճայնագրութիւնը. բայց
երբ Ճէզայիրեան վստահացուց թէ Համբար-
ձումն ալ այցելու դասախօս ընել մտադիր
էր Սասգիւղի, չվարանցեաւ այլեւս:

Արիսողոմ Իւթիւճեան հաստատուելով
այդ խաղաղիկ գիւղին մէջ, սկսաւ հետզհե-
տէ փայլիլ, և նորանոր հեղինակութիւններով
պայծառացնել Ս. Ստեփաննոս եկեղեցին,
ուր կը գիւնէին շատեր՝ լսելու համար իր
նոր եղանակած «Փառք 'ի բարձունս»ը՝
զոր քառասուն տղաք միաբերան կ'երգէին,
ի ներկայութեան Մկրտիչ ամիրայ Ճէզայիր-
եանի:

Շաբաթը մէկ երկու անգամ կ'այցիւէր
նաեւ Պապա Համբարձում, որմէ կը սովորէր իր
թերի մնացած ճայնագրութեան արուեստը.
շատ անգամ կ'ընկերանար անոր՝ մայրաքա-
ղաքիս գլխաւոր քեֆէնները, և կ'ընդօրինա-
կէր ճայնագրուելու արժանի եղանակները:
Օր մը ներկայ կը գտնուէր իր վարպետին հետ
հռչակաւոր Շէյխի մը դասաւանդութեան,
որ բարկանալով քաղկապներուն դժուար ըմ-
բռնումին, կը դառնայ կ'ըսէ Պապային. —
«Ութ օրէ ի վեր դաս կուտամ Թէլալզա-
տէի հեղինակած այս Աճէմ Սչըան Պէսթէն
և տակաւին չկարողացան սորվիլ այս՝ ան-
պիտանները», որուն կը պատասխանէ Լիմօն-
ճեան, «Իմ աշակերտս տասը վարկա-
նէն կրնայ սորվիլ ատիկա եթէ ծանր և ընդ-
հատ կերպով երգես զայն»:

Կը հաճի Շէյխը և կ'սկսի մաս առ մաս
երգել «Հայաթինի ճիւղէյէ» Պէսթէն, մին-
չեւ որ Արիսողոմ կ'աւարտէ իր գործը. յե-
տոյ կը կարդայ գրածը բարձրաձայն՝ յա-
պուշ կրթելով դեռատի ուսանողներն և
ուսուցիչը, որ զարմանօք կը շնորհաւորէ
զՀամբարձում, այսպիսի աշակերտ մը հասու-
ցած ըլլալուն համար, խոստովանելով միան-
գամայն՝ որ արդարեւ այդ նորագիւտ ար-
ւեստը միակ միջոցն է ամէն եղանակները
ճշտութեամբ ըմբռնելու և կարգալու:

Արիսողոմ բաւական տարիներ Սաս-
գիւղի մէջ պաշտօնավարելէ վերջը՝ յան-
կարծ օր մ'ալ լսուեցաւ որ Իւթիւճեան
հսկամէտ է բողոքականութեան յարելու:
Այս անակնկալ լուրին վրայ խռովեցան ամ-
բողջ թաղեցիք, վասն զի շատ կը սիրէին

Արխանգելսկի և չէին ուզեր բաժնուիլ անկէ։ Տատեանք բազմիցս աշխատեցան որ այդ գաղափարէն հեռացնեն զինքը, և այդ նըպատակաւ խոստացան մինչև 1500 զրուշ ամսաթոշակաւ Զմիւռնիոյ զրկել ու տեղւոյն Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն դասախօս կարգել զԱրխանգելսկի, պայմանաւ որ ետ կենայ Բողոքականութենէ։ բայց նա ո'ւ է նիւթական միջոցի մը համար չուզեց զոհել իւր սկզբունքը, վասն զի կատարեալ համոզում գոյացուցած էր թէ աւելորդապաշտութիւններ էին պատկերները, որոց բարեխօսութիւնը, ևն. ըստ վկայութեան Տ. Եղնակ վրդ. Գրիգորեանի՝ որ այդ գաղափարները խորապէս ներշնչած էր իրեն, խոստովանութեան մ'առթիւ. բայց որովհետեւ ընտելեամբ վեհանձն էր Իւթիւճեան, խոստացաւ անձնաւիրաբար դատ տալ նորէն իր աշակերտաց։

Արխանգելսկի Բողոքականութիւն ընդունելէ յետոյ (1840) իւր հեղափարոյ վարուք և քիչ շատ ստացած լաւ դատարարական շնորհիւ սիրելի եղաւ միսիօնարաց, որոնք իր Մայրենի լեզուին և Ս. Գրոց մէջ ունեցած հմտութիւնը տեսնելով՝ կրէց ձեռնադրեցին զինքը, որով սիրացու Արխանգելսկի և Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն Ս. Ստեփաննոս Իւթիւճեան։

ԱՐԽԱՆԳԵԼՍԿԻ ԲՈԼՈՔԱՆԱԿԱՆ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵԿԵԼԵՍԻԱԿԱՆ ՍԿՈՒԼԱՆԻՆԻ

Իսպանոքեան Մարգարէն Մանեհ

Գործ իմաստասիրական Թ. Գար-
լայլ Սնգղիացւոյն։ Գին 5 զրշ.։

Կը ծախուի 4. Պոլիս Պալենց, Սիւն-
կաց և Աչճեան Գրատունները։

Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԵՐԷՆ

Հին Օրեր և Պուէտ Խաչատուր Մի- սաքեան	7,50
19րդ Դար Յովն. Պրուսացի Տեղեկաց 12,50	
Ստուեր Հին Դէմքերու, տաճարակ 5	
Թրքահայ հին վաճառականութիւն եւ վաճառականի	10,50
Այնքոյի տաճարակ իմաստասիրական 7,	
Պատմութիւն Թուրքահայոց (Գ. Բա- ժանորդագրութիւն) մէկ բաժին	30

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Զատիկեան շնորհաւորութիւնները.— Մի-
քիկներն եկեղեցւոյ մէջ.— Բարեկամական
խորհուրդ մը.— Համերաշխութեան սր-
ճապնող երեսփոխան.— Բոսպոր Գո-
շեհ, Մոսկովի վարժարանը.— Բողո-
քական հայ եկեղեցիներու մէջ։

Վերջին շարժումները, ապաշխարութեան
և տօնական օրեր, վարչական ժողովները
գաղափար չընտան մը ունեցան գրեթէ, և ժո-
ղովուրդն առաւելապէս բարեպաշտական
պարտաւորութիւններու կատարմամբ զբա-
ղեցաւ։ Հետեւապէս ազգային կեանքի մէջ
ուշագրաւ նորութիւն մը երեւան չեկաւ։
Ճիշտ այս սպաւորութեան տակ գտնուե-
ցան ամէն անոնք, որ Զատիկ երկրորդ օրը
առիթ ունեցան Պատրիարքարանի մէջ մաս-
նակցելու շնորհաւորական արարողութեանց,
և լսելու Ս. Պատրիարք Հօր յայտարա-
րութիւնները՝ ի մասին ազգային գործոց։
Ն. Սրբադնութիւնը իբրեւ ուշագրաւ ա-
ռաւելութիւն մը այս տարուան՝ անցեալ
տարուան վրայ, անդրադարձաւ որ «անց-
եալ Զատիկ ամսին երկրորդ և երրորդ օ-
րերը սարսափի սպաւորութեան ներքեւ
կը քրտնէր ժողովուրդը, սակայն Ազա-
տութեան Բանակը փարատեց այդ երկիւղը,
և ուրախ ենք որ մէկ տարուայ չընտան մէջ
վրջապին գլուխը ջախջախուեցաւ, և ներ-
շնչուեցաւ այն յոյսն որ պիտի կրնանք
ապրիլ, և այս ամէն յոյսերն իրարու ներ-
շնչելով, պիտի զգանք որ կենդանացումի-
թուականը սկսած է՝ մեռելութենէ յարու-
թիւն առնելու համար։»

Գրիստոսի սուրբ Յարութիւնը, գերա-
զանցօրէն ներշնչող և յուսադրող տօն մը,
առուգիւ ոգեւորութիւն և կեանք կրնայ
բերել ամէն անոնց որ քրիստոնէական ճշ-
մարիտ կեանքով մը կ'ապրին։ Եւ Հայ
բողոքականութեան եկեղեցիին զաւակները ան-
շուշտ այդ ներքին հոգեկան ուժով է որ
կրցեն են բարձրագոյն դուրս գալ դա-
րերու արաւիրքին մէջէն։ Դժբախտաբար
այդ քրիստոնէական կեանքն է որ կը թու-

լանայ աստիճանաբար մեր ժողովուրդին մէջ, և հետզհետէ կը պրկուին ձգտեալ յարաբերութիւնները ժողովրդեան զանազան դասակարգերուն մէջ: Շատ ի դէպ էին ուրեմն Ս. Պատրիարք Հօր խօսքերը, երբ կ'ըսէր. «Չեմ կրնար խորհիլ թէ ուրիշներէ ջախջախուած այս ժողովուրդը պառակտուի իր մէջ, և եթէ դիմադրելու բաներ կան՝ փոխանակ իրիւր զօրաւոր զանգուած մը դիմադրելու և երկրին յառաջդիմութեան նպաստելու, պէտք չէ այսպէս բաժնուած, աչքի դէմ աչք, զէնքի զէմ զէնք հանել, ինչպէս կ'ըսէ խոսակցան առածը: Բրիտտոսի Յարութեան առջեւ այլ ևս ասոնք նշանակութիւն չեն ունենար, և փափաքելի էր յոյժ որ եղբայրութեան դրօշին տակ մնայինք ամէնքս, պատկառանք ազդելով մեր դրացիներուն, ինչպէս մեր նախնիք:»

Ն. Սրբազնութիւնն այս յոյսով Զատիկը շնորհաւորեց ներկաներուն, և Տաճարի Խմբագրութիւնը նոյն իղձն ու բաղձանքը կը յայտնէ խոնարհաբար: Բաղձանք մը որուն իրականացման յոյսը շատ տարտամ է իր մէջ սակայն, քանի որ ճրգճիմ, երկրորդական խնդիրներ տակաւին առիթ կ'ըլլան մեր մէջ անհամաձայնութիւններու, պառակտումներու և տիտի ու անհարկի վարկաբեկումներու:

Միթիւններու խնդիրը, այդ կարգի երկրորդական բան մը ըլլալով հանդերձ, տակաւին կ'զբաղեցնէ Մամուլը, և Վեհ. Հայրապետին կարգադրութիւնը՝ միթիւնները եկեղեցիներէ բախրովին տարբեր տեղեր սարքելու մասին, անհարկի քննադատութեանց տախիթ կը դառնայ: Չինք հոս կընար թէ մեր կուսակցական եղբայրներն ինչո՞ւ կը յամառին անպատճառ եկեղեցիներու մէջ գումարուելու. ինչո՞ւ չեն ուղեր հասկնալ որ եթէ եկեղեցին իրապէս ժողովուրդինն է, ժողովուրդը նոյն սրբավայրերը կը նկատէ հաւաքման վայր մը՝ մի՞ միայն սրբազան արարողութեանց հանգիստաւոր ըլլալու, աղօթելու և հոգեւոր ու բարոյական կեանքի խրատներ լսելու համար, և թէ Հայերու ստուար մեծամասնութիւն մը կոյ որուն զգացումները կը

վիրաւորուին՝ իր պաշտելութեան առնորդայ եղած վայրը կուսակցական անհարկի վիճաբանութեանց և ձեռկրուքի թատր մը դարձած տեսնելով: Հայ ժողովուրդը, իր հետ ունենալով նաեւ Հայ եկեղեցականութիւնն առանց բացառութեան, իր լայնամտութեան ապացոյցը տուաւ արդէն, աղատութեան առաջին օրերուն տաճարներու դռները կոնակի վրայ բանալով կուսակցականներու առջեւ. յուսալով որ ասոնք աղտառութեան գաղափարը և միեւնոյն ատեն եղբայրութիւնը, սէրը և համարաշխութիւնը ծաւալել պիտի աշխատէին: Ինչո՞ւ վարժանալ, երբ խոշոր յուսաբանութեան մը ենթարկուած, ինքն ալ գաղափարի յեղաշրջութիւն մը կ'ունենայ և միանգամ ընդ միշտ կ'ուզէ փակել տաճարի դռները, բարձր բռնելու համար Եկեղեցւոյ նուիրականութիւնը:

Մենք կը կարծենք թէ հայրապետական բացարձակ վճռին և ժողովուրդի ստուար զանդուածին գաղափարի բուռն հոսանքին առջեւ(*) մեր կուսակցական եղբարք խոհեմութիւնը պէտք է ունենան չափելու, չյամառելու անպատճառ եկեղեցւոյ մէջ խօսելու իրենց սօցխալիստական եղբայրացիի և չգիտեմ ուրիշ ի՞նչ տեսակ գաղափարներու վրայ, զորս ազատ են պարզել եկեղեցիէ տարբեր, ուրիշ ու է վայրի մէջ, ինչպէս ժողովուրդն ալ ազատ է ատենք մտիկ րնելու կամ ոչ: Այս կը պահանջէ ազգին գերագոյն շահը, և մենք կը կարծենք որ այս կը պահանջէ նաեւ իրենց շահը: (**)

(*) Սովաճիւններու կողմէ Բիւզանդիոնի պատուական տնօրէնին վրայ եղած բիրտ յարձակման դէմ աշխարհի զանազան անկիւններէն, եւ ամէն դասակարգի անձերու կողմէ եղած ազդու բողոքները շատ որոշ գաղափար մը կը տան ժողովրդային կարծիքին վրայ, ի մասին խնդրոյ առարկայ եղած հարցին:

(**) Այս տողերը շարուած էին արդէն, երբ Բիւզանդիոնի վերջին երկու թիւերուն մէջ կարդացինք մեր մեծատաղանդ գրողէտին՝ Արշակ Զօսմանեանի հոյակապ ուսումնասիրութիւնը՝ եկեղեցիներու մէջ միթիւնի գումարելու անխնայ անպիտան վրայ: Ազգին ճշմարիտ օգուտը մոտձոյ լրջախոհ անձնաւորութեանց անպայման գնահատման արժանացան իր տեսութիւնները: Մասնաւոր ուշադրութեան արժանի էին մանաւանդ երկրորդ յօդուածին թեւադրութիւնները՝ մեր հետեւելիք ուղղութեան վրայ:

Եթէ ազգին կուսակցական և ոչ-կուսակցական դատարարներուն մէջ ներքին ճգնիմ վէճեր խորունկ ցու կը պատճառեն խորհող միաքերու, միւս կողմէ ուրախալի է տեսնել համերաշխութեան տաք շունչը որ սկսած է սգեւորել ազգին երեք անջատ հատուածները: Տաճարի խմբագրութիւնը մեծապէս զգածուած է այն համակիր զգացումներէն և քաջաւերութիւններէն, որոնք յայտնուեցան և կը յայտնուին իրեն, ո՛չ միայն Հայ. Եկեղեցւոյ զաւակ եկեղեցական թէ աշխարհական անձնաւորութեանց, այլ և Հայ-հումէական և Հայ-բողոքական ազգակիցներու կողմէ, որոնք ազգին երեք հատուածներն առաւել քան երբէք միաձայլ զանգուած մ'ընելու բաղձանքը — զոր յայտներ էր Տաճար իր Խորհրդորդ թիւին մէջ — սիրով կ'ընդգրկէին և կը խոստանային ամէն բարեացակամ աջակցութիւն, այդ գաղափարին ծաւալման համար:

Ուրախալի է որ այդ գաղափարը, այս տողերը գրողին և ուրիշներո՛ւ ալ կողմէ տարբեր թերթերու մէջ յայտնուած, կը սկսի մարմին առնել հեղուհետէ, Պոլսի թէ դաւաճներու մէջ: Ապրիլ 1ը, Հայու տառապանքին վերջին ահաւոր դրուագին տխուր տարեդարձը, առիթ մը եղաւ անդրադառնալու թէ ազգին այդ երեք հատուածները, հակառակ դաւանական, յարանուսնական տարբերութեանց, միեւնոյն ցեղին զաւակներն են. միեւնոյն արիւնը կը հոսի իրենց երակներուն մէջ, միեւնոյն վիշտն ու տառապանքն ունին իրենց բաժին, և միեւնոյն սպազոն վերապահուած է իրենց՝ տխուր թէ յուսալից:

Այս պատճառով էր ահա որ Կիլիկիոյ նահատակներուն յիշատակին արժանաւոր յարգանք մ'ընծայելու համար Ռօպէրդ Քօլէճի պատուական հայ ուսանողութիւնը, Ապրիլ 4ի Կիրակին Գուրու Չէլմէի եկեղեցիին մէջ սգահանդէս մը կազմակերպեց, որ իր տխուր պարզութեան մէջ շատ հանդէսաւոր էր և վսեմ, ու խորունկ նշանակութիւն մը ունէր մա՛նուանդ այն պատճառով որ Հայ տառապանքի կոկիծին տպաւորութեան տակ միացած կը տեսնուէին Հայ եպիսկոպոսն և բողոքական բրօքէսէօնը,

Հայու դարուոր տաճարին մէջ, որուն կամարները թնդացած են, աւա՛ղ, սուգի ու կոծի հեծեծանքներով: Հանդէսը զոր բացած էր Տ. Գէորգ արքեպիսկոպոս, շարունակուեցաւ բրօքէսէօն Ճէճիգեանի զգայուն մէկ բանախօսութեամբ՝ ուր ահաւոր կոտորածին մանրամասնութիւնները կինդանի գոյներով նկարագրուեցան: Բայց մեծանուն բրօքէսէօնը շատ իրաւունքով աւելցուց թէ ինք յուսեալ չէ ազգին ապագային համար, որ յուսալից է՝ եթէ տիրէ մեր մէջ համերաշխութիւն և եղբայրական սէր: Այս ոտթիւ բրօք. Ճէճիգեան յիշեց պատմութիւնը մահամերձ աղջկան մը, որ գոթեալ հայրն ու մայրը կանչած էր իր օրհասականի անկողին քով և իր վտիտ ձեռքերով անոնց գլուխները միացուցած էր, ըսելով որ ինք կը բաժնուի աշխարհէս բայց կուզէ որ իրենց խախտած սէրը կապէ ամրացնէ իր գերեզմանին առջեւ: «Այսպէս, ըստ, Կիլիկիոյ մեր անմահ նահատակները՝ իրենց վտիտ բազուկները կրկնցուցած կարծես, մեր մէջ իրարմէ ուժացած սիրտերը, իրարմէ բաժնուած հոգիները կը միացնեն. մենք անոնց գերեզմանին առջեւ պէտք է կապուինք իրարու հետ, և այն ատեն անոնց նահատակութիւնէն օրհնութիւն կը բղխի ազգին համար:» Ներկայ ուրիշ անձեր, և ի մասնաւորի Տ. Թէրզեան էֆ. Կարեւոր բանախօսութիւններով ի վեր հանեցին թէ ազգն ի՞նչ պէտք է խորհի և ի՞նչպէս պէտք է աշխատի ներկայ ճգնաժամին մէջ:

Ոչ նուազ սրտայայտ հանդէս մը ևս կատարուեցաւ նոյն ինքն Աստանայի մէջ, ուր այն կիրակի առտուն քաղաքին Հայոց միակ եկեղեցիին մէջ Կիլիկիոյ վշտակիր Կաթողիկոսին նախազանութեան տակ հոգեհանգստան հոգեւոյդ արարողութիւն մը կատարուելէ ետք, իրիկուան դէմ ալ, դա՛րձեալ նոյն տաճարին մէջ, մեր Բողոքական համարին եղբարք հաւաքուեցան՝ յիշատակի պաշտամունք կատարելու համար մեր մարտիրոսացեալ եղբայրներուն ի պատիւ: Բողոքականաց հովիւ Վեր. Աշճեան — ինչպէս կը զրէ Տիար Խաչատուր Գուրգեան առ Բիւզանդիոն ուղղուած

թղթակցութեան մը մէջ — պաշտամունքն սկսաւ կարգաւորվել Յսթերայ թղթին երրորդ գլուխը, որուն վրայ հիմնեց իր հոյակապ քարոզը և օգտակար դասեր հանեց ժողովուրդին օրուան կեանքին համար: Պաշտամունքէն յետոյ եկեղեցւոյ Տ. Արաքէ քահանան «Օրհնակք եղերութեան» ուլ արձակեց ժողովուրդը՝ բողոքական թէ ոչ-բողոքական հաւատարմապէս: Այս գեղեցիկ իրողութիւնը տեղեկագրող Տիար Գեղեցեան իրաւամբ կը գովէ Տ. Սահակ Ս. Կաթողիկոսի աղատամիտ և սիրալիր հոգածութիւնը և թոյլատու հոգին՝ համաձայն Մայր Եկեղեցւոյ դարաւոր աւանդութեանց, և ուրախութիւն կը յայտնէ լուսաւորչական և բողոքական հասարակութեանց փոխադարձ քաղցր վերաբերումին համար, որով անգամ մըն ալ կը հաստատուի թէ «Հայ ազգը թէեւ ինքն իր մէջ բաժնուած ըլլայ յոյժ ցուալիօրէն, բայց նա մէկ է յաջա խաւովին և սուրին առջեւ, մէկ է իր տառապանքներով և զրկանքներով, մէկ է իր եղական պատմութիւնով, և վերջապէս մէկ պէտք է ըլլայ իր նահատակ սուրբ եկեղեցիով:»

Նոյն կիրակի օրը մայրաքաղաքիս ուրիշ մէկ արուարձանին, Գառգիւղի մէջ, համերաշխ եղբայրակցութեան գեղեցիկ ցոյց մը կ'ըլլար դարձեալ: Տեղւոյն Մասեանց Ակունքը բանախօսելու հրաւիրած էր բողոքական պատուելի մը՝ Վեր. Շմաւոնեան և յեղափոխական կուսակցապետ մը՝ Տիար Սապահգիւլեան: Այդտեղ ալ տալիս բանախօսը՝ Վեր. Շմաւոնեան՝ գեղեցիկ քարոզով մը ուսուցնողիւն թէ ի՞նչ եղած է Հայուն դերը պատմութեան մէջ, և շատ մը հայ եկեղեցականներէ տեղի պերճախօս և համոզուած չեչուով բարձրացուց Հայ Եկեղեցիի բարերար ազդեցութիւնը՝ կորով, յոյս, հաւատք ներշնչելու Հայ ժողովուրդին, որուն դժխեմ բայց պատուաբեր դերն եղած է դարերու ընթացքին մէջ, և է միշտ ցոյսօր՝ մարտիրոսանալ, նահատակուիլ ի նպաստ քաղաքակրթութեան, թուով մը, ամուր պարիսպ մ'ըլլալ վախճան խաւովին դէմ որ հին ժամանակներէ ի վեր ընկրկած է այդտեղ, և չէ կր-

ցած յառաջանալ աւելի ևս դէպ ի արեւմուտք, շարունակելու համար իր քանդիչ դերը: (*)

Գոհունակութեան, շնորհաւորութեան արժանի էր նաեւ բանախօսութիւնը Տիար Սապահգիւլեանի, որ ներկային մէջ Հայերու քաղաքական ինչպիսի ուղղութեան հետեւելու ծրագիրը պարզելու առթիւ, պնդեց Ազգային հաստատեալ իշխանութեանց պահպանման ստիպողական պէտքին վրայ, և եթէ գտնուին, ըսաւ, այնպիսիներ որ ուզեն «դէն չպրտել» այդ սահմանադրապէս նուիրագործուած հոգեւորական իշխանութիւնները, զիրենք պէտք է «դէն չպրտել»:

Եւ այդ բանախօսութիւնները կ'ըլլային Միթիթարեանց Մօտայի վարժարանի պարտէզին մէջ, ուր Հայ-հռոմէական վարդապետներ, Հայ քահանայ մը և զոմագան դաւանութիւններէ Հայեր հաւասարապէս կը ծախարարէին ամէնուն ալ սրտի մօտիկ գաղափարները:

Պէտք է ուժ տալ այս շարժումին: Համերաշխ գործակցութիւն՝ ոչ միայն ազգին կուսակցական և չէղոք զանազան դասակարգերուն, այլև ազգին կրօնապէս անջատուած հատուածներուն ալ մէջտեղ: Ասիկա պիտի ըլլայ խարխալ մեր յոռաջդիմութեան և ձերբազատման: Արդէն իսկ առաւել քան երբեք չհշտուած կը տեսնենք մեր Հայ-բողոքական եղբայրները՝ Մայր-Եկեղեցիին մերձեցման շարժումը: Ապահով ենք մեր Հայ-հռոմէական եղբայրներուն ալ նոյնքան սերտ, համակիր, համերաշխ զգացումներուն վրայ, և առաւել ևս յուսալից ենք սիրալիր հասկացողութեան մը՝ երկու համայնքներուն մէջտեղ, մանաւանդ յորմէ հետէ Տ. Պօղոս Ս. Թէրզեանի նման գերազանցօրէն ազգասէր եկեղեցական մը կոչուած է մեր Հռոմէական ազգայնոց Պատրիարքութեան: Ա՛լ վստահ ենք թէ Հ. Սահակ Տ. Մովսէսեանի նման լայնամիտ և ճշմարտապէս ազգասէր վարդապետներ՝ դատաւիտութեանց առարկայ չպիտի դառնան այս կամ այն լոտինամիտ կղերին... կամ աշխարհականին կողմէ:

ՋԱՐՄԱՅՐ ՔԱՅԱՆԱՅ

(*) Վեր. Շմաւոնեան Թերզեան տնօրէն իրմազքին խոստացած է՝ յատկապէս Յաւարի համար գրի առնել իր այդ գեղեցիկ բանախօսութիւնը:

Տ Ա Ճ Ա Ր Ն Ե Ր

Տաճարներ կան փստայեղ եւ վիթխարի,
Ահագրեցիկ, հսկայաշէկ կոթողներ
Յալիսեմին խորհուրդներուն յուսայեղ,
Ուր օրհնեմք զմեքերեմքն կը թոյնի:

Տաճարներ կան ստուերաւած, մեկաւոր,
Գանձարաններ տեղերուն երկնային,
Որոնց յոյկ կանաւներէն կը կարին
Հոգիին մէջ արքայանքներ հեշտածոր:

Տաճարներ կան վիմափոր, մէջ ձորերուն,
Ուր փառալիքս պատերէն դեռ կը յորդին
Աղօթքներուն արձագանգը, սուրբ, անգիմ
Երջասակը մեր հայրերուն հազներգու:

Տաճարներ կան կիսալուծուած հայկական,
Արիւնոռոյց, դեմահայած ձեռքերէն
Բանդուած, որք աղերսարկու կը հեծեն,
Անբարշտաց կարծես անեծք կը կարդան:

Սակայն, ո՛վ Տէր, Տաճարիդ մէջ երկիւնքի,
Անկողմիտ այդ տաճարները, որպէսզի,
Հոն քեզ պաշտած սերունդները միանան
Երանութեան մէջ գեթ, կապով հոգեկան:

ՍԱՐԳԻՍ ՊՏԵԼԻԿԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՌԱԼՖ ՎԱԼՏՈ ԷՄՐՍՆ

Համայնքի մը պատմութիւնը, իր ծոցին
մէջ ծնած, սնունդ ու տպրած մեծ հոգիներ
րու պատմութիւնն է: Չկայ պատմութիւն
առանց հանճարի, առանց ստեղծող միտ-
քերու և ներշնչող հոգիներու: Նիշէ, այդ
տարօրինակ ու միտքիք միտքը, ամբողջ
բնութեան ու մարդկութեան նուիրական
պաշտօնը ըլլալ կը կարծէ հանճարներ
ստեղծել: (Ու Ռեյնան, մարդուն էութիւնը
ցնցող յախուռն ու յանդուգն պարբերու-
թեան մը մէջ, մարդուն ու բնութեան ար-
ժանաւոր գործն ըլլալ կը կարծէ Ստուած
ստեղծել): Եւնական պատմութիւնը ոչ մէկ
դիւթանք, ոչ մէկ հմայք ունի առանց

Սովորաբար, Պլատոնի: Առանց Յիսուսի,
ըստ Սփինոզայի, չոր ու ցամաք, անշունչ ու
անհոգի պիտի ըլլար Հրէական պատմութիւնը:
Առանց Սահակին ու Մեսրոպին, ծանծաղ
ու ցանցաւ իրողութիւններու փլատակ
մըն է Հայուն պատմութիւնը: Կեանքը
յաւերժապէս տափակ ու անհրապոյր պիտի
ըլլար առանց մեծ հոգիներու վերացնող,
գիւթող ու ներշնչող ներկայութեան: Յա-
ւիտեանապէս ապերձանիկ պիտի ըլլայինք
այս կեանքին մէջ, եթէ զմեզ վարող, ա-
ռինքնող, մագնիսացնող հոգի մը տաք
չունչը չզգայինք: Անոր հոգիին ներհոսքով
մեր հիւանդ, նուաղկոտ, թարթափուն հո-
գիին խորը, ներուժ, ներկուռ պիտի ընէր
կեանքը:

Ամերիկեան գրականութեան ու իմաս-
տասիրութեան (եթէ ունի երբեք) պատ-
մութիւնը նոր շրջան մը թեւակոխեց Էմր-
սոնի ներհուն ու նկարագրող, իմաստալից
ու իմաստասէր գրչին տակ: Ամերիկացին,
գերազանցօրէն գործնական մարդ, իր գրա-
կանութիւնը ու իմացականութեան պատ-
մութիւնն ալ այդ կեանքին ցոլացումը միայն
կրնայ ըլլալ: Էմրսոն, մտային վայելքներէ
համ չառնող այդ Ամերիկացիին՝ տօլարնե-
րու կոյտին մէջ շփացող ծանծաղամիտ մար-
դակերդին, հեգնական ոճով մը կ'ըսէ.
«Ինչո՞ւ մարդ հարստանալու պէտք ունի:
Ինչո՞ւ ձիւր, տուններ, գեղեցիկ հագուստ-
ներ, զուարճութեան վայրեր պէտք է ու-
նենայ: Ոչ ուրիշ պատճառով, բայց միայն
խորհուրդ չունենալուն համար: Տո՛ւր ա-
նոր միտքին նոր պատկեր մը, և ան որ
կ'առանձնանայ պարտէզի մը և կամ սեն-
եակի մը խորը զայն վայելելու համար,
այդ երազովը աւելի հարուստ է քան ամ-
բողջ երկրի մը հարստութիւնը: Մեր տու-
ները մեր բարեկամներուն հաճելի ընելու
համար, մեր հանճարին չենք վստահիր, ա-
նոր համար պաղպաղակ կը գնենք»: Էմր-
սոն կարծես լերան բարձունքէ մը դիտելով
քաղաքի մը թո՛ւ ու բո՛հին մէջ դեգերող
խուժանը, անոնց վրայ արգասանական ակ-
նարկներ նետելէ ետք կ'ըսէ. «Ասոնք մար-
դեր չեն, այլ անօթութիւններ, ծարաւու-
թիւններ, տենդեր և անորժակներ, որոնք

կը քալեն : Մարդեր ի՞նչպէս կարող են ապրիլ ասանկ աննպատակ :

Էմբսըն գերազանցապէս լաւատեսութեան առաքեալն էր : Այն դարը որուն զաւակն էր ինք, յոռետեսութեան ժահրը կը բուրէր ամէն կողմ : Զօլա իր բիրտ իրապաշտութիւնով գրականութեան նուիրական ու սուրբ տաճարը կը սրբապղծէր : Էլիբի իր լավիան ու մելամաղձոտ գրականութիւնով, դէմքերէն ժպիտ, սիրտերէն խինդ, ու հոգիէն զգացումը կը կողոպտէր : Շօքէնհաուէր, տիեզերքը կամքով մեկնելու իր խմսատարական ձեռնարկին մէջ, կեանքը քմածին, անօգուտ ու անիծեալ բան մը կը նկատէր, ուժ տալով հին հին Նիքովանայի վարդապետութեան : Մարդկութիւնը՝ զինքը այս տարականոն հանձարներուն կործանիչ ու դժոխային սղդեցութենէն ազատելու համար երկնատուր հանձարի մը կը կարօտէր : Էմբսըն, պատուելով մարդկութեան հորիզոնը միթագնող բարդ ու սեւ ամպերը, ճառագայթարձակ արեւի մը պէս փայլեցաւ ու շողաց, լուսաւորելով մութ սիրտերը ու խաւար հոգիները : Եկաւ որպէս զի պատմէ բոլոր մարդերուն թէ իրերու սիրտին մէջ իմացականութիւնն է բարի կամք կայ, թէ մէկ միտք մըն է ամէն տեղ գործօն, աստղի շողին կամ լճակին վերվէտումին մէջ, թէ հոգին աւելի լայն է քան միջոցը, աւելի հին քան ժամանակը, յոյսի չափ ընդարձակ է սիրոյ չափ զեղուն, թէ երկիրն է երկինք մարդուն հոգիին մէջ կը ներհոսին, թէ մարդ միշտ Աստուծոյ հոգին է որ կ'ըմպէ և կ'ըմբոյնէ, թէ առարկաներու և իրերու գեղեցկութիւնը բնազանցական և յաւիտենական աղբիւրէ մը տրուած է, և թէ աշխատութիւնը ոչ թէ թշուառութեան աղբիւրն է ու կեանքը անիծելու պատճառ մը, ինչպէս կը պնդէր Շօքէնհաուէր, հապառախատութիւնը Աստուծոյ դաստիարակութիւնն է :

Էմբսըն իր դարը կանխած եղաւ, իսէապաշտական իր այս յայտարարութիւններով : Կեանքը կոյր բախտին խաղալիքը չէր, ու այս աշխարհը, հպելի իրողութիւններն և զգացումները, չէին կրնար ըլլալ

վերջնական իրողութիւնը : Կեանքը իր հիմքունէր սկզբունքներ, ու շարժառիթ մը՝ որ շատ բարձր էր ու անբացատրելի բիրտ զգացումներով : Այդ շարժառիթն և սկզբունքը, սիրոյ մէջ գտաւ Էմբսըն. «Սէրը նոր երեւոյթ մը պիտի հագցնէր այս խոնջած, ծեր աշխարհին որուն մէջ կ'ապրինք իբր հեթանոսներ ու թշնամիներ երկար ատեն : Սիրոյ սկզբունքին ուժը մարդկային ընկերութեան մէջ մեծ շահերու վերաբերումով անգործածելի է մնացել և մոռցուել : Բայց օր մը բոլոր մարդիկ սիրողներ պիտի ըլլան, և ամէն դժբախտութիւն պիտի անհետի տիեզերական արեւ ճառագայթին մէջ» : Անոր համար հզօրագոյն զօրութիւնը տիեզերքի մէջ՝ սէրն էր : Իրեն համար տիեզերքը հոգեկան էր, ու ամէն ուրեք տիեզերական Հոգիին ներկայութեան մէջ կը զգար ինքզինքը :

Երբ կը շրջէր պարտէզին մէջ, պատկանանքով վար կ'առնէր իր գլխարկը ու կը խոնարհէր վարդին տուփէ : «Անտառներուն մէջ հաւատքի և բանականութեան կը վերադառնանք : Հոն կը զգամ թէ կեանքի մէջ ինծի ոչինչ կրնայ պատահիլ, ոչ մէկ թշուառութիւն զոր բնութիւնը չկրնայ վերանորոգել : Երբ մերկ գետնին վրայ կեցած, գլուխս զուարթ օդին և անտառնուն միջոցին մէջ կը մորճուի, ստորին եսապաշտութիւնս կ'անէանայ, թափանցիկ աչքի մը կը փախում : Ես ինքս կ'անէանամ, ամէնը կը տեսնեմ, Տիեզերական Էակին հոսանքները չրջան կ'ընեն իմ մէջս, Աստուծոյ մէկ մասը, մէկ շամանդաղը կ'ըլլամ» :

Ու կրկին բնութեան այս պաշտումն էր որ երգել կուտար անոր.—

«Երբոր ես պսոկիմ շոճիներու քակ,
Երբ իրկուան աստղը շողայ գերք սուրբ բոց,
Կը ծաղրեմ ընդդէմ գիտութիւնն համակ,
Սոփեսոց Դպրոցն եւ դասը գիտնոց :
Ի՞նչ կ'արժեն ասոնք իրեց խորհուրդով,
Մարդն Աստուծոյ գնեկ երբ քառսփիկ փով :
Բնութեան սիրեկն հոսեցան բոյր
Աստուծաշունչի հագներգներն աղոթոր» :

Միակ բանը որ այս կեանքն ապրիլը արժէքաւոր ու բանական կը դարձնէ, ա-

ուսթիւութեան կամ կրօնի զգացումն է, թէ տիեզերքը բարոյական ու հոգեկան օրէնքներով կը կառավարուի: Էմբարնի կրօնքը բնութեան ծոյցն կը հոսէր: «Լեւան օղին պէս մաքուր, աշխարհին զմուռնն է սն: Անով տիեզերքը ապահով ու բնական է»: Մեզի, մտամուր, զգայապաշտ ու գետնաքարչ հոգիներու շատ պերճախօս ու փրկարար չեն այս խօսքերը, «այսպիսի հանճարի մը՝ որ էր մարդկութեան ամենէն բարձր տիպովը, բանականութեան ամենէն հիմնադիր արտայայտութիւնը իր ամենէն լայնածաւալ ձեւին և ամենէն Աստուածաման տեսչանքին մէջ»:

Ս. Ն. ԳԱԼԵՕՆՃԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դաւիթ էֆ. Խաչկոնց, ծանօթ իր բանասիրական հրատարակութիւններով և փնտռուած դասագիրքերով, ինչպէս են Կրօնի ուսումի, Աշխարհագրութեան և Դուռնի պիտի ընթանալու շահեկան դասընթացքները, Սահմանադրութեան ընթացած բարեբար ազատութիւնէն օգտուելով ձեռնարկած էր իրատարակել դասընթացք մը ևս Ազգ. Պատմութեան, որուն Միջին Բն ևս հրատարակուեցաւ այս անգամ, մանկավարժական նորագոյն միջոցներով պատրաստուած, և ճոխ պարունակութեամբ, պատմութեանքներով, ընթերցողներով և խնամուած ու առատ պատկերներով զարդարուած: Եազըճեան գրատունը, գործին կարեւորութեան համեմատական խնամոտ տպագրութեամբ մը ի լոյս ընծայած է մօտ 300 երեսներէ բաղկացած այս գեղեցիկ դասագիրքը: Գին 10 զր:

Կեդրոնատեղի Ա. Պ. Եազըճեան և Ընկ. Գրատունը, 11 Պազըճըլար, Սուլթան Համամ:

«ՏԱՃԱՐ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ա. Ք. Տ., Զօրում, եւ ուրիշ համակրողներ.— «Տաճար» խմբագիր-տնօրէնը խորապէս զգածուած է իրեն եղած շնորհաւորական համակիր արտայայտութիւններէն, որ խոտորնակ կերպով կը համեմատին իր արժանիքին: Իրիւս քաջալերական խօսքեր միայն կրնանք նկատել ուղղուած ներքողները: Մեր միակ փառասիրութիւնն է մեր համեստ կարողութիւնն ի սպաս դնել, պաշտօնացմանը համար Հայ. Առաքելական Ս. Եկեղեցւոյ, որ դարերու ընթացքին մէջ պահելու պահպաններ է հայ ժողովուրդին և կը շարունակէ նոյնը ընել այսօր ալ, այս սկեպտիկ դարուն մէջ: Բայց բազմացուած նպատակին յաջողութեան համար անխուսափելի կերպով կը կարօտինք եկեղեցական թէ աշխարհական գրագէտներու և կարող ու բանիմաց անձնաւորութեանց դործնական աջակցութեան: Սրտագին շնորհակալութիւն ամէն անոնց որ առաջին օրէն հաճեցան զօրավիզ ըլլալ մեր տկարութեան, այս դժուարին ձեռնարկին մէջ:

Ս. Ա., Սկիւսար.— Բնադրատութեան մը մէջ քննադատողին թաքուն ոգին պէտք է փնտռել ամենէն աւելի, և եթէ անխուսափանելի շարժառիթ մը կայ, չարժեք պատասխանել: Դիտել կրնաք տալ միայն ձեր խօսակցին թէ ժողովրդային կրօնաթիւրթի մը մէջ, ինչպէս պէտք է ըլլար Տանաւր աւաջին օրէն, կարելի չէ առաւելակշիռ տեղ մը տալ պատմա-բանասիրական նիւթերու, անմատչելի ժողովրդեան ստուար մեծամասնութեան, որ կ'ապրեցնէ և որուն համար զլիաւորապէս կը հրատարակուի թերթը. հետեւապէս անիրաւութիւն և անգործական պիտի ըլլար անհատկանայի և յաճախ վերացական բաներ միայն հրամցընել տրուած դրամին փոխարէն: Ասիկա կը խոտորնակի Հանդէս Ամսօրեայն ալ. այդ գերողանցապէս պատմա-բանասիրական Հանդէսը, որ Ապրիլի թիւին մէջ չի վարանիր յայտարարելու թէ «հայ հասարակութիւնը դեռ ի վիճակի չէ դուռ գրական կամ մանտանդ բանասիրական թերթ ապ-

րեցնելու», և ասոր համար ազգային և քաղաքական հարցերով ալ կ'զբաղի հիմա, և զգալապէս աւելցած է իր բաժանորդներու թիւը: Ասիկա բաւ է թէ պատմութեան, մասնագիտական նիւթեր չպիտի հրատարակուին. միայն պէտք է ջանալ հնար եղածին շտի հասկնալի լլլալու աշխատիլ ժողովուրդին, որ ճիշդ չընկեր անիմանալին հասկնալու, և մէկդի կը նուտէ պարզապէս, Թերթը կարգացուելու համար կը հրատարակուի, և ոչ թէ մուկներու պաշար հայթայթելու:

ՈՒԷՄԴ-ՀՊՊՕԲԸՆ, Պ. Վ. Գ.—Շնորհակալութեամբ ստացանք 12 բաժանորդներու բաժնեգները: Թերթերը կը շրջուին կանոնաւորապէս: Ընկալագրերը մասնաւոր նամակով:

ՄԱՆՁԷՄԻԸՐ, Գ. Ե. Ի.—Շնորհակալութեամբ ստացանք ութ բաժանորդի բաժնեգները: Նոյնպէս:

ԵԳԻՊՏՈՎ, Մ. Վ. Ա.—ՌՕՏՕՄԴՕ, Բ. Բ. Թ.—ՊԱՆՏՐՄԱ, Կ. Վ. Մ.—ԱԴԻ. ՊՈԼԻՍ, Մ. Վ. Ի.—ՍԱՄՍՈՆ, Ս. Վ. Օ.—Մեր նամակներու պատասխանին կը սպասենք:

ԿԻԻՄԻԻԼՃԻՆԷ, Ն. Բ. Ն.—Բաժնեգները ստացանք: Ընկալագրերն արդէն շրջուած են:

ՍՕՖԻԱ, Մ. Բ. Տ. Մ.—Ստացանք երկու բաժնեգին: Ստացագրերը կը շրջուին:

ԳՍԻԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Գաւառի և արտասահմանի Պատ. բաժանորդներէն և գործակալներէն կը խնդրուի մասնաւորապէս՝ թերթին թէ՛ խմբագրական և թէ վարչական ճիւղերուն իրենց բոլոր առաքումներն ընել մի՛ միայն առ խմբագիր-տնօրէն Տաճարի (տե՛ս կողքին վրայ): Այսպէս որոշեցինք ընել որպէս զի նամակները յապաղումի չենթարկուին և ժամանակին ստանանք:

Պոլսոյ մէջ բաժանորդագրութեան և խմբագրական գործերու համար՝ վերոյիշեալ հասցէէն զատ՝ կարելի է գիմը նաև Տիար Ս. Ս. Եւզրեհան և Ընկ. Գրաւունը, Սուլթան Համամ, Պաղքըճըլար, Թիւ 11:

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐԲԵՐ

ԲԱՐԵԿԱՄԻՍ ՄԱԳՆԻՍՏԱԿԱՆ ՓՈՐՁԵՐԸ, Ա. ՏԱՐՕՐԻՆԱԿ ՎԷՊ ՄԸ, ԳԵԼԵՄ Մանուկ Յ. ԽՏԵԱՆ. — Օգտաւոր նպատակով մը գրի առնուած հետաքրքրաշարժ վիպակ մը, որուն ընթերցողը մագնիսական շահեկան փորձերու վրայ գոնէ հարեւանցի գալափար մը կ'ունենայ: Բայց գործին օգտակարութիւնն առաւելապէս յայնմ կը կայանայ որ կեանքի մէջ յաջողելու գաղտնիքը կը պարզուի. այն է հզօր, անուսած կամքի ուժը, որ հրաշքներ կը գործէ: Անհամբերութեամբ կը սպասուի գործին Բ. մասին: Այսպիսի սրբաւարդ ու գործերու ընթերցումն անհրաժեշտ է մեր երիտասարդութեան, որ ա'լ լիազ անցնելու է անիմաստ, զաասի-բանաստեղծութիւններու, երեւակայական և յաճախ անշահ վէպերու արտադրութենէն և վերծանումէն: Գին 3 լրշ.: Դիմել հեղինակին, Կիրասոն:

ՀԱԿԱԿՐՕՆ ՊԱՅՔԱՐԸ, ԳԵԼԵՄ Բրոք, Արսնաւ Տ. Յակոբեան. — Ուշագրաւ բանաստեղծութիւն մը զոր մեծայարգ բրոքէստօրն արտասանած է Կ. Պօլսոյ Ե. Բ. Ընկերակցութեան մէկ ժողովին մէջ: Գին 1 լրշ.:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարեսէր ազգային մը տարեկան 2 օրիւնակ Տաճար նուիրած է, մէկը Լիւ և միւսը Կառլոյ անապատներուն:

Տեարք Յ. Կարազեան որդիք և Տիար Ե. Նալպանտեան տարեկան մէյմէկ օրինակ Տաճար նուիրած են գաւառի ազգատիկ վարժարաններու: Կը յատկացնենք՝ առաջինը Ատանայի, և երկրորդը Հաճընի ազգային վարժարաններուն:

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՀՄԱՅԵԱԿ ԳԶՆԵ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՀԱՐՄԱՅԻ ԳԶՆԵ. ԿԷԶԻՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Հաղմագրելար, Յակոբեան խան

“**ՏԱՃԱՐԻ**”
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դուրուս
Գաւառաց » »	40 »
Արճաւանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռք կը ծախուի պրակը	50 փարայ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Մ. Վրդ. Գալէմքեարեան
2. Տ. Տիրայր Մ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
4. Տ. Պարգեւ Վրդ. Դանիէլեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարեան
7. Տ. Ջարմայր Բնյ. Կէղիւրեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բնյ. Պալըզճեան
5. Տ. Պօղոս Բնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Դրիգոր Բնյ. Ճէպէճեան

Տահարի թէ՛ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Քահանայ Կէղիւրեան, Կ. Պոլիս Պէշիքթաշ, Հայոց Եկեղեցի,

دوسمادته بشکطاشده ارمفی کلیسائنده « داجار » غزتمسی مدیری باباس زارماير

Rev. Père Zarmaïr Guézurian

Rédacteur de la Revue «DADJAR» Constantinople, Béchiktache, Eglise arménienne